



Հելսինկյան Քաղաքացիական Սամբլեայի
Վանաձորի գրասենյակ



Բաց Հասարակության Հիմնադրամներ

Խոշտանգումների, արժանապատվությունը նվաստացնող
վերաբերմունքի դեպքերով ՀՀ Հատուկ քննչական
ծառայության կողմից և ՀՀ դատական ատյաններում
հրականացվող քննության վիճակի վերաբերյալ.
վերլուծություն

Վանաձոր 2016

Սույն վերլուծության մեջ տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց Հասարակության Հիմնադրամների կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության Հիմնադրամների դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց Հասարակության Հիմնադրամների տեսակետներին:

վերաբերելու. վերլուծություն

քննարկման ծրագրի կողմից և ՀՀ դատական արդյունավետության բարելավմանը նպաստող վերաբերմունքի դեպքերով ՀՀ Հատուկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ.....	5
Փաստաբաններից տեղեկատվության հավաքագրման ձևաթուղթ.....	11
Տուժողի նկատմամբ վատ վերաբերմունքի կանխումն ապահովող երաշխիքների չպահպանումը, նման վերաբերմունքը փաստող ուղղակի ապացույցները, անուղղակի ապացույցները, փաստական կանխավարկածներ:.....	17
Մինչդատական վարույթում կայացված որոշումների օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման վերաբերյալ (ԳՈՐԾԻՔ Հ-2)	23
Դատական վերահսկողությունը առաջին ատյանի դատարանում	23
Դատարանի որոշման փորձագիտական վերլուծություն (դրա հիմնավորվածության, ինչպես նաև դատական նիստի ընթացքում հաստատված կամ չհաստատված փաստերին համապատասխանելու և դատական քննության իրավունքի վերականգնման առյուծակետ միջոց իրականում հանդիսանալու տեսանկյունից)	29
Դատարանի իրավական վերլուծությունները.....	30
Դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումը	32
Վերաքննիչ դատարանի գնահատականը.....	43
Դ. Վերջաբան	46

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից իրականացված մշտադիտարկման այս ծրագրի նպատակն էր վերհանել խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների կանխարգելման և արդյունավետ քրեական հետապնդման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վիճակը: Խնդիր էր դրվել ուսումնասիրել իրավապահ մարմինների և դատական համակարգի գործունեությունը՝ նշված վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցների, մասնավորապես՝ խոստովանական ցուցմունքների օգտագործման արգելքի, խոշտանգման, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի մասին հայտարարությունների արդյունավետ, այսինքն՝ մեղավորների հայտնաբերելու ողջամիտ հեռանկարներ տրամադրող քննության և նրանց նկատմամբ բավականաչափ զսպող և համարժեք պատիժ նշանակելու տեսանկյունից:

Նշված ուղղություններով անհրաժեշտ փաստական տեղեկություններ հավաքելու նպատակով մշակվել էին մշտադիտարկման հետևյալ գործիքները՝

1. փաստաբաններից տեղեկատվության հավաքագրման ձևաթուղթ,
2. մշտադիտարկման գործիք՝ մինչդատական վարույթում կայացված որոշումների օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման վերաբերյալ,
3. ՀՀ ՔՕ 119, 309 (2-րդ, 3-րդ մաս) և 341 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական քննության դիտարկման քարտ,
4. ՀՀ ՔՕ 119, 309 (2-րդ, 3-րդ մաս) և 341 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով վերաքննիչ և Վճռաբեկ վարույթներում դատական քննության դիտարկման քարտ,
5. ՀՀ ՔՕ 119, 309 (2-րդ, 3-րդ մաս) և 341 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով մեղքի հաստատման չափորոշիչների և պատժողական դատական քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրության թերթիկ:

Նշված գործիքների տեսակների ընտրությունը և դրանց մշակումը նպատակ ուներ բացահայտելու ՀՀ կողմից ստանձնած՝ վերը նշված պարտավորությունների կատարման ուղղությամբ երկրում ձևավորված պրակտիկայի ամփոփ պատկերը՝ քրեական գործով վարույթի բոլոր փուլերում՝ քրեական գործի նյութերի նախապատրաստումից սկսած մինչև խոշտանգումն իրականացրած անձանց նկատմամբ արդարացի պատիժ նշանակելը: Հենց սկզբից պետք է նշել, որ 3-5-րդ գործիքները այդպես էլ մնացին չկիրառված, քանի որ չկային ՀՀ քրեական օրենսգրքի թվարկված հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ դատարան, ըստ էության, քննելու համար ուղարկված գործեր: Անգամ չի արձանագրվել արված հայտարարություններով ենթադրյալ խոշտանգողներին մեղադրանք ներկայացնելու թեկուզ մեկ դեպք: Բոլոր դեպքերով լավագույն դեպքում առկա է եղել քրեական գործ հարուցելու մասին որոշում, որից հետո, սակայն, վարույթը կարճվել է:

Սա մենք գնահատում ենք ոչ թե իբրև որևէ եզրակացություն անելու համար անհրաժեշտ փաստական նյութի բացակայություն, այլ հակառակը՝ ուղղակի փաստական ապացույց՝ այն հանգամանքի, որ Հայաստանի Հանրապետությունում խոշտանգման մասին հայտարարությունների քննության և հնարավոր մեղավորների նկատմամբ քրեական հետապնդման ոլորտում կիրառվում է կայուն ձևավորված պարտական քաղաքականություն: Այս քաղաքականության դրսևորումներ են նաև

կոռուպցիոն հանցագործությունների կամ ընտրակեղծիքների ու իրական կեղծարարների լիարժեք և լրիվ բացահայտումների իսպառ բացակայությունը:

Սույն դիտարկման արդյունքները ևս մեկ անգամ հաստատեցին վաղուց ի վեր ձևավորված այն պատկերացումը, որ իշխանության ներկայացուցիչների կողմից ենթադրաբար կատարված հանցագործություններով վարույթի առաջխաղացման, այն է՝ քրեական գործի հարուցման, մեղադրանք առաջադրելու գործը դատարան ուղարկելու և մեղադրական դատավճիռ արձակելու համար, գործում են ապացուցողական բոլորովին այլ՝ շատ ավելի բարձր չափանիշներ, քան այն բոլոր դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործը իշխանության ներկայացուցիչ չէ:

Այս խտրական վերաբերմունքը դրսևորվում է քրեական վարույթի բոլոր փուլերում (այդ թվում՝ դատական փուլերի բացակայության մեջ), դատավարական հարկադրանքի միջոցների բացակայության և, ինչպես նշվեց, վարույթն առաջ տանող տարբեր որոշումների համար «պահանջվող» տարբեր ապացուցողական չափանիշներում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ

Մինչև առանձին գործեր ներկայացնելը նշենք այս եզրակացության հիմքում ընկած հիմնական այն տենդենցները, որոնք ակնհայտորեն բխում են դիտորդների կողմից առաջին երկու գործիքների լրացմամբ ստացված տեղեկատվությունից: Այսպես՝

1. անգամ հարուցված վարույթների դեպքում ենթադրյալ խոշտանգողները երբեք չեն հայտնվել, ոչ կասկածյալի ոչ էլ մեղադրյալի կարգավիճակում, հետևաբար՝ նրանք երբեք չեն ձերբակալվել, նրանց լիազորությունները՝ իրենց կողմից ենթադրաբար կատարված քրեական արարքի փաստի քննության ընթացքում չեն կասեցվել, առավել ևս՝ նրանց նկատմամբ չի կիրառվել խափանման որևէ միջոց: Սա այն դեպքում, երբ եղել են ուղիղ ցուցմունք տվող վկաներ, և բոլորս էլ գիտենք, որ ոչ պաշտոնյաների կողմից ենթադրաբար կատարված, հատկապես՝ ծանր հանցագործությունների վերաբերյալ բողոքներով որքան հեշտ են հարուցվում քրեական գործեր, ձերբակալվում կասկածյալներ, ներգրավվում մեղադրյալներ և վերջիններիս նկատմամբ դատարանում հարուցվում և բավարարվում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու թույլտվություն տալու միջնորդությունները:
2. ենթադրյալ խոշտանգման փաստի առթիվ, ի տարբերություն նախկին տարիների, երբ մեծամասամբ մերժվում էր քրեական գործի հարուցումը, այժմ գրեթե միշտ հարուցվում է քրեական գործ, սակայն դրա քննությունը կրում է ձևական բնույթ: Ուսումնասիրված գործերով. խոշտանգման փաստի առթիվ արված հայտարարությամբ հարուցված քրեական գործի քննությունը միշտ եղել է ոչ լիարժեք և ոչ բազմակողմանի: Այս վերջին երկու գնահատականները չպետք է համարել որպես մեր սուբյեկտիվ կարծիք: Իրականում դրանք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ (խոշտանգումների արգելքը) հոդվածի մեկնաբանությունների հիմքում ընկած «արդյունավետ քննության» եզրույթի արտացոլումն են ՀՀ քրեադատավարական տերմինաբանությամբ: Մեր կողմից նման գնահատականի հիմքում այն փաստական տվյալներն են, որոնք ՄԻԵԴ-ին, վերջինիս կողմից կայուն հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, թույլ են տալիս արձանագրել ազգային իշխանությունների կողմից ոչ

արդյունավետ քննություն իրականացնելու փաստը, այն է՝ այնպիսի քննություն, որը քննող մարմինն տրամադրում է մեղավորներին հայտնաբերելու ողջամիտ հեռանկարներ: Դիտարկված գործերով խոշտանգման ենթադրյալ փաստի առթիվ քննություն իրականացրած մարմինները, վարույթը կարճելու մասին իրենց որոշումների հիմքում մշտապես դնելով ենթադրյալ խոշտանգողների՝ իրենց մեղավորությունը ժխտող ցուցմունքները, մշտապես խուսափել են այնպիսի ապացույցներ ձեռք բերելուց, որոնք կարող էին այդ ցուցմունքները հերքել: Մասնավորապես՝ երբեք նշանակված չի եղել դատահոգեբանական փորձաքննություն այն դեպքում, երբ առկա են եղել ենթադրյալ խոշտանգման գոհի ցուցմունքներն այն մասին, որ իր նկատմամբ իրականացվել է հոգեբանական բռնություն, ինչպես նաև՝ ֆիզիկական բռնություն, որը թողել էր առողջությունը չբայքայող հետքեր: Այսպիսով՝ նշված գործերով Հայաստանի Հանրապետությունն ունեցել ու չի կատարել իր՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն ունեցած դատավարական պարտավորությունները: ՄԻԵԴ-ը չի համարում, որ ՄԻԵԿ-ը միշտ խախտվում է այն դեպքերում, երբ խոշտանգման փաստի քննությունը չի ավարտվում մեղադրյալ ներգրավելով, գործը դատարան ուղարկելով կամ մեղադրական դատավճռով: Սա արդյունքի պարտականություն չէ: ՄԻԵԴ-ը պահանջում է կատարել քայլեր՝ քննչական գործողություններ, փորձաքննություններ, ընդհանրապես՝ ապահովել այնպիսի դատավարական ընթացակարգ, որը հավասարապես ի գործ է հաստատել նաև ենթադրյալ գոհի ցուցմունքները: Ոչ մի գործով նման գործողություններ կատարված չեն եղել:

3. խոշտանգման մասին հայտարարությունների վերաբերյալ վարույթի հետ կապված մյուս խտրական տարրերը կայանում են հետևյալում. դատավարական որոշումներ, մասնավորապես՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու համար այս գործերով, չգիտես ինչու (կամ պարզ է՝ ինչու), վարույթն իրականացնող մարմինը որդեգրում է ոչ թե ապացուցման այն շեմը, որը պահանջվում է մինչդատական վարույթի ընթացքում անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար (հիմնավոր կասկածի շեմ), այլ այն շեմը, որը պահանջվում է մեղադրական դատավճիռ կայացնելու համար: Եվ քննիչները իշխանության ներկայացուցիչների նկատմամբ մեղադրանքի առաջադրումը հնարավոր են համարում միայն նրա մեղքը ապացուցված լինելու պարագայում: Պարզ ասած՝ իշխանության ներկայացուցիչների անմեղության կանխավարկածը, ի տարբերություն հասարակ մահկանացուների այդ իրավունքի, շատ ավելի դժվար պետք է լինի դնել կասկածի տակ ու փորձել հերքել:
4. մյուս խտրական մոտեցումը այն է, որ քրեական հետապնդում իրականացնելու համար, ի տարբերություն, իհարկե, սովորական ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության, այս գործերով ենթադրյալ հանցագործության գոհից պահանջվում է ապացուցել իր գոհ լինելու հանգամանքը: Դիտարկված գործերի մեծ մասում խոշտանգման ենթադրյալ գոհը տուժող չի ճանաչվել: Արդյունավետ քննության հետ կապված պետք է նշել, որ այս հանցագործությունների մասին հաղորդում տված անձինք, ի տարբերություն մյուս տեսակի հանցագործությունների մասին հաղորդած անձանց, գտնվում են սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկվելու ավելի մեծ ապառնալիքի տակ: Գործնականում, իշխանության ներկայացուցիչների «բարեխիղճ վարքագծի» և դրանից բխող անմեղության կանխավարկածն այնքան ամուր է, որ ինքնաբերաբար ստեղծում է այն կասկածի տակ դնող անձանց, այն է՝ ենթադրյալ խոշտանգման գոհերի սուտ մատնությամբ հանդես գալու կանխավարկածը: Պետք է նշել, որ դատարանները որոշ գործերով (Ա.Բ.-ի գործով, Գ.Ա.-ի գործով և այլն) նշում են, որ իր նկատմամբ խոշտանգման մասին հայտարարած ենթադրյալ գոհի գործողություններում «բացակայում է սուտ մատնության հանցակազմը». մի հարց, որն ամբողջությամբ դուրս է ենթադրյալ խոշտանգողների նկատմամբ

քրեական հետապնդում չիրականացնելու մասին մինչդատական վարույթն իրականացնող մարմինների կողմից կայացված որոշումների օրինականության նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից: Պետք է նշել նաև, որ խոշտանգման ենթադրյալ գոհի կողմից, այն էլ՝ տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող անձի կողմից, իր դատավարական իրավունքների պաշտպանության իրականացման ընթացքում նման սպառնալից խոչընդոտներ են հարուցվում ոչ միայն պետական իշխանության, այլև այլ, մասնավորապես՝ բժշկական հաստատությունների կողմից: Օրինակ՝ Ժ.Ա.-ի գործով տուժողի դեմ, որը գանգատվում էր նրանից, որ իրեն խոշտանգման պայմաններում են պահել հոգեբուժարանում մեկ ամիս շարունակ, հոգեբուժարանի աշխատակիցները հանցագործության մասին հաղորդում են ներկայացրել ոստիկանություն, վիրավորանքի համար ներողություն խնդրելու և գումարի բռնագանձման պահանջով հայց ներկայացրել դատարան:

5. կապված նախորդ կետում նշվածի հետ՝ դատարանները, այս գործերով մերժելով քննության մարմնի կողմից կայացված որոշման դեմ բերված բողոքը, նշում են (օր.՝ Գ.Ա.-ի գործով), որ ենթադրյալ խոշտանգողների գործողություններում «բացակայում է հանցակազմը» (ՀՀ քրեական օրենսգրքի 309 կամ 119 հոդվածի)՝ մոռանալով, որ հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը որոշվում է գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից, այսինքն՝ արդարադատության իրականացման շրջանակներում, այլ ոչ թե՝ դատական վերահսկողության:
6. Ինչ վերաբերում է դատական իշխանության կողմից՝ քրեական գործը հարուցումը մերժելու կամ հարուցված քրեական գործի կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների օրինականության նկատմամբ դատական արդյունավետ վերահսկողության իրականացմանը, ապա պետք է ասել, որ այստեղ նույնպես ՄԻԵԿ 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքից քաղաքացիների անձեռնմխելիության դատական պաշտպանությունը կրել է խիստ ձևական բնույթ: Դատական իշխանության իրացման այս ձևաչափում կայացված որոշումները տվյալ գործերով ունեցել են արծարծվող փաստերից որևէ կերպ չփոփոխվող, նախապես որոշված բովանդակություն: Արդեն ասվեց, որ ՀՀ ՔՕ 119, 309 (2-րդ, 3-րդ մաս) և 341-րդ հոդվածներով, կապված պաշտոնատար անձանց կողմից ՄԻԵԿ 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքի փաստացի խախտումների որակման հետ, որևէ գործի դատաքննություն չի դիտարկվել նման փաստական մեղադրանքներով՝ դատարաններում գործերի բացակայության պատճառով: Դատարանները, որոնք, բացի արդարադատությունից, կոչված են դատական իշխանություն իրացնել նաև մեկ այլ ձևով, այն է՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելով, մասնավորապես՝ վերացնելով մինչդատական վարույթի մարմինների անօրինական որոշումները, ըստ էության՝ ֆիլտրի դեր են կատարել և վավերացրել են բոլոր բողոքարկված որոշումները, ինչի հետևանքով էլ որևէ գործ չի հասել ըստ էության դատական քննության փուլին: Դատարանների կողմից այս վերահսկողության ընթացքում անցկացված նիստերի դիտարկումը ցույց է տալիս, որ դատարանները որևէ կերպ չեն անդրադարձել խոշտանգումների արգելքի մաս հանդիսացող՝ ենթադրյալ գոհերի հայտարարությունների առթիվ կատարված արդյունավետության պահանջին: Գրեթե միշտ դատական այս նիստերն անցկացվել են հետաձգումներով, որոնց պատճառների թվում եղել են բողոքը բերած կողմին որոշակի փոստաթղթեր տրամադրելը և իր դատավարական իրավունքներից օգտվելու երաշխավորումը: Այնուհետև դատական նիստերը տևել են ոչ երկար, ընդհանուր առմամբ եղել է միջինը թվով երկու բովանդակային նիստ: Բոլոր գործերով առաջին ատյանի դատարանը մերժել է բողոքը, ընդ որում՝ վերջին նիստն ավարտվելուց հետո միջինը 15-20 րոպե անց հրապարակելով իր որոշումը: Բերված վերաքննիչ բողոքները նույնպես մերժվել են:

7. մեկ այլ օրինաչափություն, որի մասին պետք է անպայման նշել. ենթադրյալ խոշտանգումները դիտարկված գործերով կատարվել են թե՛ ձեռքարկման ընթացքում, թե՛ բերման ժամանակ, և թե՛ հարցաքննության ընթացքում: Եղել են դեպքեր, երբ ենթադրյալ խոշտանգման զոհը ընդհանրապես քրեական հետապնդման չի ենթարկվել: Սակայն այն բոլոր դեպքերում, երբ նման պայմաններում տրվել է խոստովանական ցուցմունք, այն տալու պահի դրությամբ զոհը պաշտպան չի ունեցել:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է 10 դեպք, որոնց առթիվ արված խոշտանգման և/կամ այլ վատ վերաբերմունքի մասին հայտարարություններով քրեական վարույթը գտնվում է տարբեր փուլերում: Սակայն, բոլոր գործերով էլ որևէ դեպք չկա, որտեղ պաշտոնատար անձանցից որևէ մեկին առաջադրված լինի քրեական մեղադրանք: Բոլոր դեպքերում էլ կամ քրեական գործ չի հարուցվել կամ այն կարճվել է:

Մասնավորապես՝

1. Ա.Բ.-ի գործով¹. 2014թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է քրեական գործ, իսկ այնուհետև՝ 2015թ. ապրիլի 17-ին, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում: ՀՀ Գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ.Գևորգյանի կողմից «Բողոքը մերժելու մասին» որոշումը կայացվել է 11.05.2015թ., որը բողոքարկվել է առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանում: 2015թ. սեպտեմբերի 2-ին վերջինիս բողոքը մերժվել է: Վերաքննիչ դատարանը 2015թ. հոկտեմբերի 26-ին մերժել է առաջին աստիճանի դատարանի որոշման մեջ բերված բողոքը: Այնուհետև 2015թ. նոյեմբերի 13-ին վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ դեռ որևէ որոշում չի կայացվել:
2. նույնը տեղի է ունեցել Ա.Մ.-ի գործով. 2015թ. մայիսի 8-ին Կազմակերպության կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը 2015թ. հուլիսի 17-ին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը կայացրել է որոշում՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:
3. նույնը տեղի է ունեցել Ա.Դ.-ի գործով, ընդ որում՝ դատարանը մերժման որոշումը կայացրել էր 11.05.2015թ.՝ առանց կողմերին որևէ հարցեր տալու ու նոր փաստեր պարզելու, մինչդեռ գործով կայացած վերջին դատական նիստը տեղի էր ունեցել, այսինքն՝ դատական նիստում բողոքը քննվել էր 28.04.2015թ., իսկ դրանից հետո 04.05.2015թ. նշանակված նիստը չէր կայացել:
4. Ա.Յ.-ի գործով. 2015թ. հուլիսի 14-ին Ա.Յ.-ի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2015թ. որոշման դեմ: 2015թ. սեպտեմբերի 10-ին վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացվել է վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում,

¹ Ձեկույցի մեջ օգտագործվում են խոշտանգման և/կամ այլ վատ վերաբերմունքի զոհերի անվան սկզբնատառերը՝ հաշվի առնելով փաստական հանգամանքների խիստ անձնական բնույթը, ինչը միաժամանակ, ամենևին էլ խոչընդոտ չի հանդիսացել մշտադիտարկման առարկա երևույթը համարժեքորեն ներկայացնելու համար:

որի դեմ 2015թ. հոկտեմբերի 9-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ վճռաբեկ դատարանի կողմից որոշում չի կայացվել:

5. Ժ.Ա.-ի գործով. 2013թ. մայիսի 30-ին Ժ.Ա.-ն Երևան քաղաքի Ավանի հոգեբուժական կլինիկայի և ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցների կողմից իր կամքին հակառակ և բռնության գործադրմամբ ապօրինաբար տեղավորվել է Ավանի հոգեբուժարան, որտեղ շուրջ մեկ ամիս ապօրինի պահվելու ընթացքում ենթարկվել է խոշտանգման՝ քնել է ճաշարանի բազմոցին, գրկված է եղել անկողնային և հիգիենիկ պարագաներից, բուժանձնակազմի կողմից ենթարկվել է բռնության և կոպիտ վերաբերմունքի: ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Լ.Մելքոնյանը 2014 թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, 134-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցել է քրեական գործ, որոշում է կայացվել Ժ.Ա.-ին տուժող ճանաչելու մասին:
6. Գ.Ա.-ի գործով. 2015թ. հոկտեմբերի 5-ին Գ.Ա.-ի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի կողմից դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Ա.Թադևոսյանի 08.08.2015թ. որոշման դեմ: 17.03.2016թ. ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից որոշում է կայացվել «քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին» որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին:
7. Հ.Մ.-ի գործով. 2016թ. փետրվարի 5-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը Գ. և Հ. Մ.-երի կողմից ներկայացված բողոքը՝ ՀՀ ՀԲԾ ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Առաքելյանի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 31.07.2015թ. որոշումը և Գլխավոր դատարագի տեղակալ Հր. Բադալյանի՝ բողոքը մերժելու մասին 17.08.2015թ. որոշումը վերացնելու վերաբերյալ, մերժել է, որի դեմ 23.02.2016թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք: Ներկայումս գործը գտնվում է վերաքննիչ դատարանի վարույթում:
8. Ա.Խ.-ի գործով. Կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման հիման վրա կայացվել է քրեական գործ հարուցելու մասին որոշում, և կատարվել է նախաքննություն: Կազմակերպությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից չի ստացել այլ որոշում, որի վերաբերյալ պատրաստվում է ներկայացնել դիմում-բողոք՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով տրամադրել քրեական գործով կայացված որոշումների պատճենները:
9. Ժ.Բ.-ի գործով. Ժ.Բ.-ի կնոջ՝ Ռ.Ն.-ի կողմից դատարան է ներկայացվել բողոք՝ ՀԿԳ ավագ քննիչ Վ. Խաչատրյանի քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 23.03.2015թ. որոշումը և ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Հր. Բադալյանի բողոքը մերժելու մասին 15.04.2015թ. որոշումը վերացնելու վերաբերյալ, որը դատարանի կողմից 06.10.2015թ. մերժվել է: 2015թ. հոկտեմբերի 21-ին դատարանի վերը նշված որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը 2015թ. նոյեմբերի 30-ին վերաքննիչ քրեական դատարանի կողմից մերժվել է, որի դեմ 2015թ.

դեկտեմբերի 21-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանի կողմից դեռևս որոշում չի կայացվել:

10. Հ. և Ս. Ս.-ների գործով. 25.09.2015թ. ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Խաչատրյանի կողմից 3 անգամ կայացվել է որոշում թիվ 62221714 գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին: 2015թ. հոկտեմբերի 7-ին Հ. և Ս. Ս.-ների ներկայացուցիչ, փաստաբան Տիգրան Սաֆարյանի կողմից ներկայացվել է բողոք՝ ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀԿԳ քննիչ Վ. Խաչատրյանի թիվ 62221714՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջների մասին: 2015թ. հոկտեմբերի 19-ին գլխավոր դատախազությունը մերժել է ներկայացված բողոքը:

Քանի որ մշտադիտարկման ենթարկված բոլոր գործերով խնդիրը ծնող իրավապահ մարմինների և դատարանների դատավարական մոտեցումները, ներառյալ՝ միջազգային և ներպետական իրավական կարգավորումների՝ նրանց մեկնաբանումն ու արդյունքում ձևավորված պրակտիկան նույնն են, նպատակահարմար ենք համարել ամբողջությամբ ներկայացնել գործերից միայն մեկը: Սրանով մենք նույնպես ցանկանում ենք ցույց տալ, որ պետության թվարկված մարմինների կողմից որդեգրված քաղաքականության համաձայն, որն արտահայտվում է ստորև մեջբերված և վերլուծության ենթարկված որոշումներում, կոնկրետ գործերի փաստական հանգամանքները որևէ նշանակություն չունեն, քանի որ դատարանները, ինչպես նշվեց, տվյալ գործերով քրեական հետապնդում իրականացնելը համարում են պաշտոնատար անձանց կողմից պնդվող հանցագործության կատարման փաստի ճանաչում: Ստորև ներկայացվող գործը առավել ռեպրեզենտատիվ (ներկայացուցչական) է այն առումով, որ այնտեղ բյուրեղացվել են ՀՀ իրավապահ մարմինների և դատարանների այն մոտեցումները, որոնք՝ որպես համապատասխան պաշտոնատար անձանց անպատժելիությունն ապահովող դատավարական ջանքեր, դարձել են Հայաստանի Հանրապետության՝ կայուն հաստատված իրավապահ և դատական պրակտիկա, որն ամբողջությամբ հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման բացարձակ արգելքը խախտելու մասին պնդումների արդյունավետ քննություն անցկացնելու ՀՀ միջազգային պարտավորությանը:

Ստորև ներկայացված գործով, նախևառաջ, ներկայացվում են այն գործիքների կիրառումից ստացված փաստական տեղեկությունները, որոնք մշակվել էին Կազմակերպության կողմից մշտադիտարկման առարկա երևույթը գնահատելու համար, իսկ այնուհետև ուսումնասիրվում են այն դատական ակտերը, որոնք կայացվել են մշտադիտարկման առարկա գործով և որոնք իրականում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման միջոցով անձի, այդ թվում՝ ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձի իրավունքների վերականգնման եղանակից վերածվել են նախաքննության մարմինների որոշումները վավերագրելու և սրբագրելու գործիքի, իսկ արդյունքում՝ հանգեցրել խոշտանգում կատարողներին պատասխանատվության ենթարկելու հարցերում ընդհանրապես դատարանների կողմից վերջնական որոշումների կայացման իրավասությունը նույն իրավապահ մարմիններին զիջելու կայացած փաստի:

Բացի դրանից՝ պետք է ասել, որ շատ քիչ է այն գործերի քանակը, որոնցով իրական տուժողները դիմում են դատարան՝ իրենց իրավունքները վերականգնելու համար: Ստորև ներկայացված գործի դատավարական ընթացքը և մասնավորապես՝ դատարանների հիմնավորումները, ընթերցողին, կարծում ենք, կհամոզեն, թե ինչու մարդիկ հուսալքվում և չեն ցանկանում հետամուտ լինել իրենց նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորած պաշտոնյաներին քրեական պատասխանատվության ենթարկելու գործին, և անգամ՝ երբեմն դառնում երևույթը ժխտող «լռության պատի» շատ ամուր մի մասը: Մշտադիտարկման

նյութի ներկայացուցչականության առումով պետք է, այսպիսով, հաշվի առնել երևույթի լատենտային բնույթը, որը պայմանավորված է նախևառաջ, վատ վերաբերմունքի գոհերի խոցելի վիճակով, այլ ոչ թե երևույթի քիչ տարածվածությամբ:

Գործ Ա.Բ-ի նկատմամբ ՄԻԵԿ 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտման վերաբերյալ (ԳՈՐԾԻՔ Հ-1)

Փաստաբաններից տեղեկատվության հավաքագրման ձևաթուղթ

1. Ներկայացնող ...²

1.2 Երբ է ներգրավվել, ինչ կարգով

2015թ. ապրիլի 3-ին Արայիկ Զալյանը և Արթուր Սաքունցը ճանաչվել են տուժող Ա.Բ-ի ներկայացուցիչներ:

2. Քր. գործի համառոտ նկարագրությունը

2.1 Հանցագործության փաստական հանգամանքները

2014թ. նոյեմբերի 11-ին, երբ Ա.Բ.-ն իր անձնական գործերով գտնվել է Երևան քաղաքում, իրեն գանգահարել է մայրը և հայտնել է, որ ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցները գնացել են իրենց բնակարան, և պահանջել է, որ աղջիկն անմիջապես վերադառնա Վանաձոր:

Նույն օրը՝ ժամը 17:00-ի սահմաններում Ա.Բ.-ն արդեն տանն է եղել: Նույն օրը՝ 18:00-ի սահմաններում, նրանց տուն են գնացել ոստիկանության երկու աշխատակիցներ և Ա.Բ.-ին տարել են ոստիկանության Տարոնի բաժին, մայրը նույնպես նստել է ոստիկանների ավտոմեքենան, իսկ հայրը ոստիկանություն է գնացել իր մեքենայով:

Ոստիկանության բաժնում ոստիկանները կազմել են ինչ-որ փաստաթղթեր, որոնք Ա.Բ.-ն ստորագրել է, որից հետո իրեն տարել են բաժնի պետի տեղակալ Վ. Թորոսյանի աշխատասենյակ, որտեղ վերջինս իր հասցեին անպարկեշտ արտահայտություններ է արել և մեղադրել պոռնկագրական նյութեր տարածելու մեջ, որին ի պատասխան ինքն ասել է, որ նման արարք չի կատարել, սակայն իրեն ոչ ոք չի լսել, հակառակը՝ շարունակվել են իր և իր ընտանիքի հասցեին վիրավորանքները:

Այդ ժամանակ Վ. Թորոսյանը հանձնարարել է աշխատակիցներին, որ նկարահանեն Ա.Բ.-ին, որից հետո իրեն բերման ենթարկված ոստիկանության աշխատակիցը բջջային հեռախոսով նկարահանել է Ա.Բ.-ին տարբեր դիրքերից, իսկ ինքը հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով իրեն բերման են ենթարկել: Նկարահանումից հետո կրկին գնացել են Վ. Թորոսյանի աշխատասենյակ, այնտեղ են եկել նաև երեք աղջիկներ, որոնք ըստ Ա.Բ.-ի եղել են ոստիկանության աշխատակիցներ:

Վ. Թորոսյանն իր աշխատասենյակ եկած ոստիկանության իգական սեռի աշխատակիցներին հանձնարարել է խուզարկել Ա.Բ.-ին, որից հետո այդ աղջիկները Վ. Թորոսյանի աշխատասենյակի վերջնամասում գտնվող հանգստի սենյակում խուզարկել են վերջինիս: Խուզարկություն կատարելու ժամանակ, չունենալով նման անհրաժեշտություն և նպատակ ունենալով նվաստացնել Ա.Բ.-ին, ինչպես

²« ...»-ով նշված է ոչ վերաբերելի հարցը/տեղեկատվությունը:

նան նրա համար ստեղծել անելանելի իրավիճակ, ուստի կանոնադրության աշխատակիցներից մեկը պահանջել է, որ Ա.Բ.-ն ամբողջությամբ հանի հագուստը՝ ասելով, որ իր մարմնի վրա դաջվածքներ և սպիներ է փնտրում: Հագուստը հանելուց հետո պահանջել է, որ կքանստի, որպեսզի պարզեն ներքին օրգաններում, արդյոք, ինչ-որ իրեր թաքցնում է, թե՛ ոչ:

Խուզարկություն կատարող անձիք միմյանց հետ խոսել են որոշ ժամանակ առաջ խուզարկության արդյունքում խուզարկության ենթարկված անձի ներքին օրգաններում հայտնաբերված իրերի մասին և դրանով իսկ կարևորել են նման կերպ կատարվող խուզարկությունը:

Խուզարկության ավարտից հետո, Վ. Թորոսյանը վերադարձել է և միասին գնացել են բաժնի պետ Շարմազանովի աշխատասենյակ, ճանապարհին Վ. Թորոսյանի կողմից հնչել են սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ, որն էլ շարունակվել է նաև Շարմազանովի աշխատասենյակում: Քիչ անց այնտեղ է եկել նաև քննչական բաժնի պետ Գալստյանը, որը միանալով Վ. Թորոսյանին և Շարմազանովին, սպառնացել է, որ եթե Ա.Բ.-ն ինքնախոստովանական ցուցմունքներ չտա, իրեն կձերբակալեն և 72 ժամ պահելուց հետո կողարկեն կանանց գաղութ:

Ոստիկանությունում գտնվելու ժամանակ Ա.Բ.-ի ինքնազգացողությունը վատացել է, դեղերը վերցնելու համար ցանկացել է տեսնել ծնողին, սակայն ոստիկանության աշխատակիցներն իրեն չեն թույլատրել՝ ասելով, որ եթե այդ պահին առանց ծնողի չի դիմանում, ինչպես պետք է դիմանա գաղութում:

Տեսնելով, որ սպառնալիքների և ճնշումների ազդեցությամբ չեն կարողանում համոզել Ա.Բ.-ին խոստովանել իր կողմից չկատարված հանցագործությունը, Գալստյանը խնդրել է, որ Թորոսյանն ու Շարմազանովը դուրս գան սենյակից, որից հետո սկսել է Ա.Բ.-ին համոզել, որ գրի խոստովանական ցուցմունք՝ ասելով, որ այդ մասին ոչ ոք չի իմանա, գործում իր անվան փոխարեն այլ տվյալներ կլրացվեն, հետագայում ինքը դատարանում կվճարի տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և ամեն ինչ կավարտվի:

Այդ ժամանակ Գալստյանի հետ գնացել է վերջինիս աշխատասենյակ և միջանցքում հանդիպել են Շարմազանովին, ում Գալստյանը ներկայացրել է որպես իր քավորի: Միջանցքով քայլելու ժամանակ դիմացի պատին առկա ապակու արտացոլանքի մեջ տեսել է, որ Շարմազանովը իր հետևից ձեռքի շարժումով ինչ-որ ժեստ է արել, որը նմանվել է սեռական բնույթի հայեցողության: Դա նկատել է նաև Գալստյանը, որը նրա կողմից մեկնաբանվել է հետևյալ կերպ. «տես, Ա. ջան ինչ կարծիքի են քո մասին»:

Գալստյանի աշխատասենյակ է եկել քննիչ Հ. Հովսեփյանը և ներկայացել է որպես գործը քննող քննիչ, Գալստյանը նրան ասել է, որ Ա.Բ.-ն կգրի խոստովանական ցուցմունքը և միասին գնացել են քննիչի աշխատասենյակ:

Քննիչը Ա.Բ.-ին է տվել ինչ-որ փաստաթղթեր, որոնք ինքը, առանց կարդալու, ստորագրել է և սկսվել է իր հարցաքննությունը: Քննիչն իրեն թելադրել է ցուցմունքը և Ա.Բ.-ն գրել է, թե իբր, պատրաստել և համացանցի միջոցով տարածել է Մ.Ս.-ի և Ն.Ն.-ի պոռնոկազրական բնույթի նկարները: Հարցաքննության ընթացքում Գալստյանը պարբերաբար մտել է քննիչի աշխատասենյակ, ինչ-որ բան է խոսել քննիչի հետ և հեռացել: Հարցաքննությունը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում մի քանի անգամ քննիչի հեռախոսով զանգել է ծնողներին:

Գալստյանն ու Հ. Հովսեփյանն իրեն ասել են, որ ոչ ոքի, այդ թվում իր ընտանիքի անդամներին չասի, թե ինչ ցուցմունք է գրել: Հարցաքննության ավարտից հետո՝ ժամը 03.00-ի սահմաններում, քննիչի հետ միասին դուրս է եկել բաժնից:

Շուրջ 7 օր անց Ա.Բ.-ին է գանգել Հ. Հովսեփյանը և պահանջել է անհապաղ ներկայանալ քննչական բաժին: Ա.Բ.-ն ոստիկանության բաժին է ներկայացել 18.11.2014թ. 18:00-ի սահմաններում, որտեղ քննիչն ու Գալստյանն իրեն հարցափորձ են արել ունի Լ.Մ.-ի վերաբերյալ, թե ինչ կապ կա իրենց միջև, քանի որ վերջինիս համակարգչից հայտնաբերվել են նույն անձանց վերաբերյալ պոռնկագրական բնույթի լուսանկարներ: Ինքը հայտնել է, որ այդպիսի մարդու չի ճանաչում, որևէ կապ չունի նրա հետ՝ հրաժարվելով գրել, որ այդ լուսանկարները միասին են պատրաստել և տարածել, չնայած այն հանգամանքին, որ Հովսեփյանը և Գալստյանը համոզում էին նման ցուցմունք տալ: Այնուհետև քննիչի աշխատասենյակում իրեն մեղադրանք է առաջադրվել, կրկին ստորագրել է փաստաթղթեր, որոնց բովանդակությանը չեն ծանոթացրել և քննիչի թելադրանքով գրել է նախորդ ցուցմունքի բովանդակությամբ ցուցմունք: Քննիչը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինակ իրեն չի տրամադրել՝ պատճառաբանելով, որ կամ այն կկորցնի, կամ ինչ-որ մեկը կկարդա: Հարցաքննությունը ավարտվել է նույն օրը ժամը 23:30-ի սահմաններում:

2.2 Հանցագործության իրավաբանական որակումը

2014թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 62229814 քրեական գործը, սակայն 2015թ. ապրիլի 17-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում թիվ 62229814 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին:

3. Խախտված իրավունքի համառոտ նկարագրություն

Խախտված իրավունքի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի գործողությունների արդյունքում խախտվել են Ա.Բ.-ի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 17-րդ հոդվածներով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով և ՄԻԵԿ 5-րդ հոդվածով սահմանված՝ անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

3.1. Խոշտանգման³ մասին հայտարարությունն արվելուց հետո, իրավապահ մարմնի որոշումը

2014թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 62229814 քրեական գործը:

3.2 Ձեր կողմից արված բոլոր միջնորդությունների համառոտ բովանդակությունը, հիմնավորումը և դրանց առթիվ կայացված որոշումները

Միջնորդություններ չեն ներկայացվել:

3.3 Արդյոք քննություն իրականացնող անձը բավարարում է «անկախության» պահանջին

- եթե այո, խնդրում ենք մեկնաբանել՝ ինչու

³ «Խոշտանգում» եզրույթը օգտագործվում է նաև, ըստ անհրաժեշտության, «վատ վերաբերմունքի» մյուս դրսևորումների՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի վրա

Եթե ոչ, խնդրում ենք մեկնաբանել՝ ինչու

Քանի որ քննություն իրականացնող մարմինը քրեական գործում առկա հակասությունները հաշվի չի առել, չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցները մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

3.4 Արդյոք դատական բժիշկը, բավարարում է «անկախության» պահանջին ...

3.5 Կալանավայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից կալանավորի կամ ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման մասին ծանուցումը ստանալու դեպքում (այն դեպքերում, երբ անձը հայտնում է, որ մարմնական վնասվածքները ստացել է ոչ թե խոշտանգման արդյունքում, այլ ուրիշ հանգամանքներում, ասենք՝ վայր է ընկել և այլն), արդյոք, նյութերի նախապատրաստմամբ զբաղվում է սկզբնական գործով նախաքննությունն իրականացնող քննիչը:

- այո

ոչ

3.6 ՀՔԾ-ն որ չափով է հիմնվում այն մարմնի քննության արդյունքների վրա, որի աշխատակիցը ենթադրյալ խոշտանգողն է:

ՀՔԾ-ն հիմնվում է այն մարմնի քննության արդյունքների վրա, որի աշխատակիցը ենթադրյալ խոշտանգողն է այնքանով, որքանով որ չի իրականացնում արդյունավետ քննություն, հիմնվում է ենթադրյալ խոշտանգողի կողմից տրված ցուցմունքների վրա:

3.7 Արդյոք քննությունը բավարարում է «արդյունավետության» պահանջին

- այո

ոչ

3.8 Արդյոք ձգձգվել է փորձաքննության նշանակումը կամ նշանակված փորձաքննության կատարումը ...

3.9 Կատարվել են արդյոք այլ գործողություններ.

3.9.1 կարևոր վկաների հարցաքննություն

այո

- եթե ոչ, խնդրում ենք նշել պատճառները

3.9.2 դեպքի վայրի զննություն ...

3.9.3 վկաների միջև առերեսումներ

այո

- ոչ

3.9.4 այլ ...

3.10 Արդյոք վնասվածքները ստանալու՝ գոհի կողմից նկարագրված վաղեմությունը և (կամ) պատճառման մեխանիզմը և դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ պարզված վաղեմությունը և (կամ) մեխանիզմը համապատասխանում են միմյանց ...

3.11 Արդյոք անցկացվել է բժշկական գննություն, նշել արդյունքները ...

3.12 Արդյոք հարցաքննվել են տուժողի խցակիցները ...

3.13. Արդյոք կիրառվել են արդյունավետության պահանջի այլ խախտումներ

Այո

Արդյունավետության պահանջի խախտումները կատարվել են այնքանով, որքանով որ քննությունը ուղղված չի եղել հանցագործության դեպքի բացահայտմանը:

- Ոչ

3.14 Արդյոք կիրառվել են վկաների/տուժողի պաշտպանության միջոցներ

- Այո

Ոչ

3.15 ՀՔԾ քննության խախտումներն ու դրանց հիմնավորումները՝ ըստ փաստաբանի

2015թ. ապրիլի 17-ին ՀՀ ՀՔԾ քննիչ Ն. Բարսեղյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Կայացված որոշման ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ նախաքննության մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները կատարվել են թերություններով և նրա կողմից օբյեկտիվորեն չեն գնահատվել գործում առկա ապացույցները:

Սույն գործի շրջանակներում նախաքննության մարմինը ձեռքի տակ ունենալով՝ Ա.Բ.-ի, Հ.Բ.-ի, Բ.Խ.-ի և ոստիկանության աշխատակիցներ Վազգեն Թորոսյանի, Անի Գաբրիելյանի, Կարեն Մուրադյանի, Արման Գալստյանի, Հովսեփ Հովսեփյանի, Էրիկ Շարմազանովի և Արմեն Դերձյանի կողմից տրված իրարամերժ ցուցմունքները, առանց պատշաճ պատճառաբանությունների արժանահավատ է համարել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները, իսկ Ա.Բ.-ի, Հ.Բ.-ի և Բ.Խ.-ի ցուցմունքները այն մասին, որ Ա. և Հ. Բ.-ները ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են անմարդկային վերաբերմունքի և անօրինական պահվել անազատության մեջ, արժանահավատ չի համարվել:

Նախաքննության մարմնի կողմից որևէ քննություն չի իրականացվել՝ Ա.Բ.-ի և առերես հարցաքննվող Վ. Թորոսյանի, Ա. Գաբրիելյանի, Է. Շարմազանովի, Ա. Գալստյանի և Հ. Հովսեփյանի ցուցմունքների միջև ակնհայտ հակասությունները պարզելու ուղղությամբ, որոնք վերաբերվում էին Ա.Բ.-ի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված ապօրինությունների տեղի (աշխատասենյակի), հետաքննչական գործողությունների կատարման ծավալի, տեսակի, հետաքննչական բաժնից քննչական բաժնի տեղափոխելու հանգամանքներին:

Նախաքննության մարմինը որոշումը ընդունել է առերես հարցաքննություններից մի քանի օր հետո այն դեպքում, երբ տվյալ առերես հարցաքննությունների ժամանակ բացահայտված հակասություններից անմիջապես հետո կարճ ժամանակ անց անհրաժեշտ էր այդ հակասությունների վերաբերյալ իրականացնել անհրաժեշտ քննչական գործողություններ:

Նախաքննությունն իրականացնող մարմնի գործողությունները ուղղված չեն եղել վատ վերաբերմունքի դեպքի հանգամանքների լրիվ և օբյեկտիվ պարզմանը:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ստուգվել այն փաստական հանգամանքները, որ Ա. և Հ. Բ.-ները, ինչպես նաև Բ.Խ.-ն իրենց ցուցմունքներում և բացատրություններում նշել էին այն մասին, որ 11.11.2014թ. ժամը 17:00-ի սահմաններում Ա.Բ.-ն Երևանից վերադառնալուց հետո ինքնակամ ներկայացել է ոստիկանություն, Բ. Խ.-ն զանգահարել է Ա. Դերձյանին, որը հայտնել է, որ քննիչը տեղում չի, գնացեք տուն սպասեք, ես կգանգեմ կգաք:

Նախաքննության մարմնի կողմից իրավական գնահատական չի տրվել այն հանգամանքին, որ Ա.Բ.-ն 11.11.2014թ. ոստիկանության բաժին է բերման ենթարկվել ժամը 18:00-ին և այնտեղից դուրս է եկել միայն գիշերը ժամը 03:00-ին:

Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում բացառապես դրվել են Ա.Բ.-ի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրած ոստիկանության և քննչական կոմիտեի աշխատակիցների ցուցմունքները, որոնցից ունանք հրաժարվել են տուժողի ներկայացուցչի հարցադրումներին պատասխանելուց՝ պատճառաբանելով, որ իրենց կողմից տրված պատասխանը հետագայում կարող է իրենց դեմ օգտագործվել, որը ապացուցում է այն հանգամանքը, որ նրանք այդ ժամանակվանից իրենց զգացել են մեղադրյալի կարգավիճակում, որը նույնպես նախաքննության մարմնի կողմից չի գնահատվել:

4. քր. գործի ներկայիս կարգավիճակը (ըստ լրացման պահի)

4.1 որ փուլում է գտնվում գործը: Եթե ավարտվել է, ինչ որոշում է կայացվել

ՀՀ ՀՔԾ քննիչ Ն. Բարսեղյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով: Այդ որոշումը 2015թ. սեպտեմբերի 2-ին դատարանի կողմից թողնվել է ուժի մեջ:

4.2 ինչ է հարկավոր՝ առաջ շարժվելու համար՝ փաստաբանի գործողությունների պլան և ինչպիսի որոշումներ պետք է կայացվեն պետական մարմինների կողմից տվյալ գործով խոշտանգման արգելքի իրավունքի խախտումը վերականգնելու համար:

Այժմ բողոք է ներկայացվել վերաքննիչ քրեական դատարան:4 Խոշտանգման արգելքի իրավունքի խախտումը վերականգնելու համար պետք է վերացվի վարույթն իրականացնող մարմնի որոշումը, հարուցվի քրեական գործ և կատարվի լրիվ, բազմակողմանի ու օբյեկտիվ քննություն:

Ներպետական դատական ատյաններում արդյունքի չհասնելու պարագայում նախատեսվում է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

4.3 արդյոք ընթանում է ծառայողական քննություն նույն փաստերի առթիվ,

- այո (եթե այո՝ ապա որ փուլում է)

ոչ

4.4 արդյոք կան կալանքի տակ գտնվող անձինք/անձ

- այո

⁴ Վերաքննիչ դատարանը 2015թ. հոկտեմբերի 26-ին մերժել է առաջին ատյանի դատարանի որոշման մեջ բերված բողոքը: Այնուհետև, 2015թ. նոյեմբերի 13-ին վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վերաբեյալ դեռ որևէ որոշում չի կայացվել:



4.5 նշել՝ արդյոք ծառայողական քննությունը կասեցվել է մինչև նախաքննության ավարտը ...

5. խնդրում ենք կից ներկայացնել՝ բժշկական գնության արդյունքների, փորձագիտական եզրակացությունների, ենթադրյալ խոշտանգողի հարցաքննության արձանագրությունների, կայացված վերջնական որոշումների, քր. գործով ներկայացված դիմումների, բողոքների, միջնորդությունների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների պատճենները ...

Տուժողի նկատմամբ վատ վերաբերմունքի կանխումն ապահովող երաշխիքների չպահպանումը, նման վերաբերմունքը փաստող ուղղակի ապացույցները, անուղղակի ապացույցները, փաստական կանխավարկածներ:

5. Արդյոք յուրաքանչյուր ձեռքակալվածի համար ֆիքսված են ձեռքակալմանն առնչվող անհրաժեշտ տեղեկությունները.

5.1. հիմքը ու ժամանակը/տեղը

- այո
- ոչ
- ...

5.2 իրավունքների մասին գրավոր ծանուցելը և դրանք պարզաբանելը

- այո
- ոչ
- ...

5.3 հարազատներին զանգը

- այո
- ոչ
- ...

5.4 բուժզննություն անցելու իրավունքից օգտվելու փաստը և ժամանակը

- այո (եթե այո՝ երբ է անցել բուժզննություն)
- ոչ

5.5 փաստաբան ունենալու իրավունքից օգտվելու փաստը և ժամանակը

- այո (եթե այո՝ երբ է այցելել)
- ոչ
- ...

5.6 արդյոք ձերբակալվածը տեղափոխվել է այլ վայր

- այո
- ոչ
- ...

5.7 առաջին հարցաքննության ժամանակը

- այո
- ոչ
- ...

5.8 Արդյոք 5-րդ կետի տակ թվարկված տեղեկություններին ծանոթ է փաստաբանը

- այո**
- ոչ

6. Արդյոք այդ գրանցամատյանները հասանելի են արգելանքի տակ գտնվող անձի և ներկայացուցչի համար

- այո**
- ոչ

7. Արդյոք հարցաքննություն/ներ/ը կատարվել է/են հատուկ դրա համար նախատեսված վայրում

- այո**
- ոչ

8. Արդյոք կալանավորը, առանց խիստ անհրաժեշտության, որպիսիք կարող են լինել նրա մասնակցությամբ դեպքի վայրի գննություն կամ քննչական փորձարարություն կատարելը, որոշակի պայմաններ պահանջող փորձաքննության կատարումը, դուրս է բերվել մեկուսարանից այլ անորոշ պատճառաբանությամբ, կամ հարցաքննության, առերեսման, ճանաչման ներկայացնելու և այլ ոչ հիմնավոր պատճառաբանությամբ:

- այո, եթե այո, ապա ինչով է պատճառաբանվել կալանավորին վարույթն իրականացնող մարմնի մոտ տեղափոխելու անհրաժեշտությունը

- ոչ**

9. Առկա է եղել, արդյոք, հարցաքննությանը նախորդած վատ վերաբերմունքի որևէ դրսևորում՝ ոչ միայն բռնության, այլև վատ պայմանների առումով՝ սննդից, քնից զրկում, մշտապես էլեկտրական լույսի միացված լինելը, և այլն:

- այո, խնդրում ենք նկարագրել**

Տուժողի նկատմամբ հոգեբանական ճնշում է գործադրվել, նրան նվաստացնելու և ինքնագնահատականը իջեցնելու քաղաքականություն է վարվել, որի արդյունքում տուժողը ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել:

- ոչ

10. Արդյոք հարցաքննությունից առաջ անձին տեղեկացվել է հարցաքննությանը ներկա գտնվող անձանցից յուրաքանչյուրի ով լինելու մասին

- այո

ոչ

11. Եթե անձը գտնվել է թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ, երբ է տեղի ունեցել նրա հարցաքննությունը, արդյոք կա բժշկի եզրակացություն՝ անձի համարժեքության վերաբերյալ

- այո

ոչ

12. Արդյոք տրվել է խոստովանական ցուցմունք

այո, եթե այո՝ արդյոք պաշտպանի ներկայությամբ՝

Պաշտպանի բացակայությամբ

- ոչ

13. Արդյոք տեսաձայնագրվել է խոշտանգման գոհի հարցաքննությունը:

- այո (եթե այո՝ ապա արդյոք տեսանյութի մեջ նշվում են հարցաքննության մասնակցող անձանց անունները, պաշտոնը, ներկա գտնվելու նպատակը)

ոչ

Ամբողջական հարցաքննությունը չի տեսաձայնագրվել, սակայն որոշ մաս՝ որում տուժողը ներկայացնում է ինքնությունը, թե ինչի համար է կանչվել:

14. Արդյոք հարցաքննության տեսանյութը հնարավորություն է տալիս դիտողին՝ պարզելու, թե արդյոք հարցաքննվողը թողնում է ինքնություն որոշումներ կայացնելուն և դատողություններ անելուն ունակ անձի տպավորություն:

- այո

ոչ

15. Արդյոք ձեռքակալվածի կամ կալանավորի նկատմամբ կիրառվել են սաստման միջոցներ՝ ձեռնաշղթաներ, ոտնաշղթաներ և այլն:

- այո (եթե այո՝ նշել ինչ է կիրառվել)

ոչ

16. Արդյոք անձը արգելանքի տակ է գտնվել դրա համար պաշտոնապես չնախատեսված վայրում կամ գաղտնի վայրում ...

17. Արդյոք կալանքի տակ գտնվող անձը (ու՛մ նկատմամբ արդեն իսկ ստացվել է կալանավորման մասին դատարանի որոշումը) շարունակել է պահվել ձեռքակալվածներին պահելու վայրում ...

18. Արդյոք անձը անորոշ ժամկետով զրկված է եղել շփման և հաղորդակցման իրավունքից

- այո

ոչ

19. Արդյոք վարույթն իրականացնող մարմինը արգելել է տեսակցությունները

- այո, եթե այո խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին՝ որքան տևողությամբ, ինչ պատճառաբանությամբ, և որքանով է դա եղել հիմնավոր: Արդյոք դա նպատակ է հետապնդել՝ կալանավորի վրա ճնշում գործադրելու:

ոչ

20. Արդյոք անձը երկար ժամանակ պահվել է մենախցում կամ մեկուսացման մեջ

- այո

ոչ

21. Արդյոք համապատասխան հիմնարկությունում ճիշտ արձանագրատում չի վարվել կամ արձանագրային փաստաթղթերում կան շատ հակասություններ

- այո

ոչ

22. Արդյոք արգելանքի տակ գտնվող անձը ոչ լիարժեք է ծանուցվել իր իրավունքների մասին՝ արգելանքի տակ պահվելու սկզբնական շրջանում կամ հարցաքննությունից առաջ

այո

- ոչ

23. Արդյոք արգելանքի տակ գտնվող անձին արգելանքի վերցվելուց անմիջապես հետո մերժել են փաստաբան տրամադրել

- այո

ոչ

24. Արդյոք օտարերկրյա պետության քաղաքացուն մերժել են իր երկրի հյուպատոսի հետ կապվելը ...

25. Արդյոք արգելանքի տակ գտնվող անձը արգելանքի վերցվելուց անմիջապես հետո բժշկական զննություն չի անցել և հետագայում նման զննության պարբերաբար չի ենթարկվել

- այո

ոչ

26. Արդյոք բժշկական փաստաթղթերը լրացվել են ոչ լիարժեք կամ դրանք վարվել են ոչ պատշաճ կերպով կամ ապօրինի ձևով ուղղվել են կամ կեղծվել

- այո

ոչ

27. Արդյոք քննչական մարմինները արգելանքի տակ գտնվող անձից ցուցմունքներ են ստացել պաշտպանի բացակայությամբ (երբ պաշտպան ներգրավված է եղել կամ տվյալ դեպքում պաշտպանի մասնակցությունը պարտադիր էր)

- այո

ոչ

28. Արդյոք ստացվող ցուցմունքները գրառվել են ոչ ճիշտ ձևով և գրառումը կատարվել է ոչ հարցաքննության ընթացքում

- այո

ոչ

29. Արդյոք հարցաքննության արձանագրության մեջ հետագայում կատարվել են ջնջումներ, ավելացումներ և/կամ ուղղումներ՝ առանց ցուցմունք տվողի գիտության

- այո

ոչ

30. Արդյոք ձեռքակալվածի աչքերը կապել են կամ այլ կերպ զրկել նրան տեսնելու հնարավորությունից

- այո

ոչ

31. Արդյոք ձեռքակալվածին զրկել են խոսելու հնարավորությունից

- այո

ոչ

32. Արդյոք ձեռքակալվածին ձեռնաշղթաներ են հագցրել և ենթարկել այլ ֆիզիկական սահմանափակումների՝ առանց որևէ լուրջ հիմնավորված արգելանքի տակ պահելով ամբողջ ժամանակահատվածում

- այո

ոչ

33. Արդյոք ձեռքակալվածին զրկել են սեփական հագուստից

այո

Որոշակի ժամկետով զրկել են հագուստից՝ անձնական խուզարկություն իրականացնելու պատրվակով

- ոչ

34. Արդյոք դիտորդական կազմակերպություններին, այցելուներին և փորձագետներին արգելել են պահման վայրեր այցելելը, կամ հետաձգել այցելություններն անորոշ ժամանակով կամ զանազան խոչընդոտներ հարուցել նրանց առաջ

- այո

ոչ

35. Արդյոք կան փաստի կանխավարկածներ, օրինակ՝ ամբաստանյալին պատասխանատու համարելը այն վնասվածքների համար, որոնք տուժողը չի ունեցել նախքան նրա իրավագործության ներքո փոխանցվելը:
Նշել՝

Չկան

**ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՍՏՈՒՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԳՈՐԾԻՔ Հ-2)**

Դատական վերահսկողությունը առաջին աստիճանի դատարանում

Ամփոփ տեղեկատվություն Ա.Բ-ի գործով գումարվել է 4 դատական նիստ՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Մկրտչյանի նախագահությամբ: Առաջին նիստը տեղի է ունեցել 19.06.2015թ., վերջինը՝ 02.09.2015թ.: Առաջին, երկրորդ և երրորդ նիստերը հետաձգվել են՝ տուժողի իրավունքների իրականացումն ապահովելու համար, որի անհրաժեշտությունը առաջ էր եկել այդ ուղղությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ թերի կատարելու պատճառով:

Ստորև բերված աղյուսակային լրացված քարտում արտացոլված են միայն առաջին դատական նիստի դիտարկման արդյունքները: Հաջորդող դատական նիստերի դիտարկման արդյունքները ներկայացված են աղյուսակին հաջորդող հատվածում՝ պարզ շարադրանքով, տեղեկատվության մեծ մասի կրկնությունից խուսափելու համար:

2. Ընդհանուր տեղեկություններ գործի՝ մինչդատական վարույթում քննության վերաբերյալ	
2.1 ու՞մ կողմից է ներկայացվել հանցագործության մասին հաղորդումը	<input type="checkbox"/> գոհի կողմից <input type="checkbox"/> գոհի հարազատների, ազգականների, մտերիմների կողմից <input checked="" type="checkbox"/> այլ անձանց կողմից /նշել, թե ովքեր են այդ անձինք/ Չոհր դիմել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, գրասենյակը ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում
2.2 ի՞նչ գործողություններ են ձեռնարկվել հանցագործության մասին հաղորդման հիման վրա	<input type="checkbox"/> Նախապատրաստվել են նյութեր և կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում <input checked="" type="checkbox"/> Նախապատրաստվել են նյութեր և հարուցվել է քրեական գործ, որը հետագայում կարճվել է
2.3 արդյո՞ք ողջ հետաքննությունը/ նախաքննությունն իրականացվել է միևնույն քննիչի /քննչական խմբի/ կողմից	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ
2.4 ի՞նչ պայմաններում է գոհը ենթարկվել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի	<p>Մանրամասնել, թե ում կողմից, երբ և ինչ նպատակով է կիրառվել խոշտանգումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, ինչ նպատակ է հետապնդել նման վերաբերմունքի կիրառումը</p> <p>ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժնի ոստիկանները Ա.Բ.-ին իր բնակության վայրից 18.00-ի սահմաններում տարել են ոստիկանության բաժին, որտեղ կազմել են ինչ-որ փաստաթղթեր, որոնք նա ստորագրել է, այնուհետև տարել</p>

	<p>են բաժնի պետի տեղակալ Վ. Թորոսյանի աշխատասենյակը: Վերջինս Ա. Բ.-ի հասցեին անպարկեշտ արտահայտություններ է արել, մեղադրել պոռնկագրական նյութեր տարածելու մեջ: Ա.Բ.-ն նշել է, որ նման արարք չի կատարել, սակայն շարունակվել են իր և իր ընտանիքի հասցեին վիրավորանքներ հասցնել: Այնուհետև Ա.Բ.-ին նկարահանել են բջջային հեռախոսով, որից հետո տեղափոխել են, ոստիկանության երեք կին աշխատակից խուզարկել են նրան՝ պահանջելով ամբողջությամբ հանել հագուստը: Ըստ Բ.-ի՝ նման վերաբերմունքը նվաստացնելու, անելանելի իրավիճակ ստեղծելու նպատակ է ունեցել: Այնուհետև Վ. Թորոսյանն Ա. Բ.-ին տեղափոխել է պետի սենյակ՝ ընթացքում շարունակելով սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ հնչեցնել, նույնաբնույթ վերաբերմունք է դրսևորվել նաև ոստիկանության բաժնի պետ Է. Շարմազանովի կողմից: Ա.Բ.-ի ինքնազգացողությունը վատացել է, նա ցանկացել է դեղեր վերցնել ծնողից, սակայն նրան թույլ չեն տվել, ասելով, որ եթե այդ պահին առանց ծնողի չի դիմանում, ինչ պետք է անի գաղութում: Ոստիկանության աշխատակիցների ճնշումների ազդեցությամբ Ա. Բ.-ն ինքնախոստովանական ցուցմունք է տվել այն մասին, որ պատրաստել և համացանցի միջոցով տարածել է պոռնկագրական բնույթի նկարներ: Քննիչը, ինչպես նաև քննչական բաժնի պետ Գալստյանը ասել են, որ ոչ ոքի չեն ասի, թե ինչ ցուցմունք է գրել: Ա.Բ.-ն ոստիկանության բաժնից դուրս է եկել 03.00-ի սահմաններում: 7 օր անց քննիչը զանգահարել է և Ա. Բ.-ին հրավիրել է քննչական բաժին, այնտեղ քննչական բաժնի պետի հետ կրկին համոզել են Ա.Բ.-ին ցուցմունք տալ այն մասին, որ նկարները պատարստել և տարածել են ոմն Լ.Մ.-ի հետ: Ա.Բ.-ն նշել է, որ նման անձի չի ճանաչում: Այդ ընթացքում Ա.Բ.-ին մեղադրանք է առաջադրվել, նրան տվել են թղթեր, որոնք ստորագրել է՝ չճանոթանալով բովանդակությանը, այնուհետև քննիչի թելադրմամբ գրել նախորդ ցուցմունքի բովանդակությամբ ցուցմունք:</p>
<p>2.5 արդյո՞ք խոշտանգման արդյունքում անձը կրել է որոշակի ֆիզիկական /առողջական/ վնաս</p>	<p><input type="checkbox"/> Այո, եթե այո, ապա նշել, արդյոք որևէ փաստաթղթում /այդ թվում բժշկական/ արձանագրվել են ստացված վնասվածքները, ինչ բնույթի և ծանրության վնասվածքներ է ստացել գոհը</p> <p><input checked="" type="checkbox"/> Ոչ</p>
<p>2.6 եթե հարուցվել է քրեական գործ, արդյոք ենթադրյալ գոհը ներգրավվել է որպես տուժող</p>	<p><input checked="" type="checkbox"/> Այո</p> <p><input type="checkbox"/> Ոչ, եթե ոչ, ապա արդյոք այդ փաստը բողոքարկվում էր</p>

	դատարանում
2.7 արդյո՞ք մինչդատական վարույթի շրջանակներում գոհը գործով ունեցել է ներկայացուցիչ	<input checked="" type="checkbox"/> Այո , (եթե այո, ապա հայտնել, թե ով է եղել ներկայացուցիչը / լիազորագրային ներկայացուցիչ , վճարովի փաստաբան, հանրային պաշտպան/։ Արդյոք այդ անձը ներկայացնում է գոհի շահերի պաշտպանությունը նաև դատարանում՝ այո <input type="checkbox"/> ոչ
2.8 արդյո՞ք գոհը ներգրավված է մեկ այլ քրեական գործով	<input checked="" type="checkbox"/> Այո , եթե այո, ապա նշել այդ գործով նրա կարգավիճակը / ամբաստանյալ / <input type="checkbox"/> Ոչ
2.9 ե՞րբ է գոհը ներգրավվել այդ քրեական գործով վարույթին	<input type="checkbox"/> Խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելուց առաջ <input type="checkbox"/> Խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելուց հետո <input checked="" type="checkbox"/> Այլ /նշել/ Զոհը նախ հրավիրվել է որպես վկա հարցաքննության, նրա նկատմամբ դրսևորվել է անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, այնուհետև օրեր անց ներգրավվել է որպես մեղադրյալ
2.10 արդյո՞ք խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելու արդյունքում գոհը տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ	<input type="checkbox"/> Այո, /մանրամասնել/ <input checked="" type="checkbox"/> Ոչ
Բողոք բերողը	
3.1 բողոք ներկայացնող կողմից ո՞վ է մասնակցում բողոքի քննությանը	<input type="checkbox"/> Զոհը /նշել անուն ազգանունը/ <input checked="" type="checkbox"/> Զոհի ներկայացուցիչը /նշել անուն ազգանունը/ Արթուր Սարունց <input type="checkbox"/> Ոչ ոք, նշել, արդյոք դատարանին հատնվել է չներկայանալու և դրա պատճառների մասին
3.2 արդյո՞ք բողոք ներկայացնող կողմը մինչդատական վարույթի ավարտին ստացել է նախապատրաստված նյութերի պատճենները:	<input type="checkbox"/> Այո, եթե այո, երբ /նշել հնարավորության դեպքում/ <input checked="" type="checkbox"/> Ոչ , եթե ոչ, ապա արդյոք բողոք ներկայացրած կողմը միջնորդեց դատարանին ստանալ գործի նյութերը և արդյոք միջնորդությունը բավարարվեց՝ այո
3.3 եթե բողոքի քննության ընթացքում	<input checked="" type="checkbox"/> Այո ,

<p>դատական նիստը հետաձգվել է բողոքաբերի կողմից նյութերին ծանոթանալու համար, ապա արդյոք բողոքաբերին տրամադրվել է բավարար ժամանակ այդ նյութերին ծանոթանալու համար</p>	<p><input type="checkbox"/> Ոչ, /արդյոք տրամադրվեց ավելի կարճ ժամկետ, քան խնդրեց բողոքաբերը/</p>
<p>3.4 արդյո՞ք բողոքը բերողը ներկայացրել է լրացուցիչ նյութեր</p>	<p><input type="checkbox"/> Այո,</p> <p><input checked="" type="checkbox"/> Ոչ, եթե ոչ, արդյոք հնարավորություն ունի լրացուցիչ նյութեր ներկայացնելու</p> <p style="text-align: center;">Այո _____</p> <p style="text-align: center;">Ոչ _____</p>
<p>3.5 բողոք բերողի կողմից ներկայացված լրացուցիչ նյութերը ընդունվել են</p>	<p><input type="checkbox"/> Այո, եթե այո՝ բովանդակային ինչ նշանակություն են ունեցել,</p> <p><input type="checkbox"/> Ոչ</p>
<p>Պատասխանող կողմ</p>	
<p>4.1 արդյոք պատասխանող կողմը մասնակցում է բողոքի քննությանը</p>	<p><input checked="" type="checkbox"/> Այո</p> <p><input type="checkbox"/> Ոչ, եթե ոչ, ապա արդյոք դատարանին հայտնվել է չներկայանալու և դրա պատճառների մասին</p>
<p>4.2 որպես պատասխանող կողմ հանդես է գալիս միևնույն քննիչը</p>	<p><input checked="" type="checkbox"/> Այո</p> <p><input type="checkbox"/> Ոչ, եթե ոչ, ապա ով է հանդես գալիս որպես պատասխանող</p>
<p>4.3 արդյո՞ք որպես պատասխանող կողմ մասնակցում է վերահսկող դատախազը</p>	<p><input type="checkbox"/> Այո, եթե այո, ապա</p> <ul style="list-style-type: none"> • արդյոք նա մասնակցում է միայնակ, • արդյոք բողոքը ներկայացվել է նաև դատախազի որոշման դեմ <p><input checked="" type="checkbox"/> Ոչ</p>
<p>4.4 պատասխանող կողմի անուն ազգանուն</p>	<p>Նիկոլայ Բաղդասարյան</p>
<p>4.5 պատասխանող կողմի պաշտոնը</p>	<p>ՀՀ ՀՔԾ քննիչ</p>
<p>4.6 պատասխանող կողմը դատական նիստերին մասնակցում է</p>	<p><input checked="" type="checkbox"/> Այո</p> <p><input type="checkbox"/> Ոչ, եթե ոչ, ապա ինչ հիմնավորումներ</p>
<p>4.7 պատասխանող կողմը բերում է հիմնավորումներ</p>	<p><input checked="" type="checkbox"/> Այո, բերում է հիմնավորումներ</p> <p><input type="checkbox"/> Ոչ, նշում է, որ բողոքարկված որոշման մեջ արդեն ամեն</p>

	ինչ պարզ գրված
Դատավորը	
5.1 արդյոք դատավորը բողոքը ներկայացնող կողմին հարցեր տալիս է ինչ-որ հարցեր պարզաբանելու համար	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ
5.2 արդյոք դատարանը փորձում է բանավոր քննության ընթացքում պարզել նոր փաստեր	<input type="checkbox"/> Այո <input checked="" type="checkbox"/> Ոչ
5.3 արդյոք բողոքարկող կողմին դատարանը տալիս է հարցեր	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ
5.4 արդյոք բողոքարկող կողմի փաստարկները կամ հակափաստարկները դատարանի կողմից որևէ գնահատման արժանանում են	<input type="checkbox"/> Այո <input checked="" type="checkbox"/> Ոչ
5.5 դատարանը խորհրդակցական սենյակ գնալուց հետո որքան ժամանակ անց է կայացրել որոշում	

Այսպիսով, **ԱՌԱՋԻՆ** նիստը հետաձգվել է, բողոք ներկայացրած կողմի՝ գործի նյութերը ստանալու միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու հիմքով:

ԵՐԿՐՈՐԴ նիստը տեղի է ունեցել առաջին նիստից ուղիղ մեկ շաբաթ անց՝ 26.06.2015թ.: Այն հետաձգվել է, քանի որ պատասխանող կողմը դատարան չէր ներկայացել և չէր ներկայացրել բողոքի վերաբերյալ նյութերը, այդ պատճառով բողոքի քննությունը հետաձգվել է: Բացի դրանից՝ տուժողի ներկայացուցիչը նշել է, որ բողոքի վերաբերյալ նյութերն իրեն քննիչը տրամադրել է դատական նիստի նախորդ օրը, ուստի ինքը բավարար ժամանակ չի ունեցել՝ դրանց ծանոթանալու համար:

ԵՐՐՈՐԴ նիստը տեղի է ունեցել երկրորդ նիստից գրեթե 40 օր անց՝ 03.08.2015թ.: Այն հետաձգվել է, քանի որ գործի նյութերում առկա էլեկտրոնային կրիչների ձայնագրությունները քննիչի կողմից չէին տրամադրվել Ա. Սաքունցին: Վերջինս միջորդել է դրանք տրամադրել իրեն, այդ հիմքով դատական նիստը հետաձգվել է:

Քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո Ա. Սաքունցը ներկայացրել է բողոքի լրացում, որը վերաբերում էր նախաքննության ընթացքում թերի, ոչ օբյեկտիվ ու ոչ բազմակողմանի քննություն կատարելուն: Պատասխանող կողմը դատարան չէր ներկայացել՝ արձակուրդում գտնվելու պատճառով:

ՉՈՐՈՐԴ և վերջին նիստը տեղի է ունեցել 02.09.2015թ., այսինքն՝ երրորդ նիստից գրեթե 30 օր անց, իսկ առաջին նիստի օրվանից (19.06.2015թ.) հաշված 2,5 ամիս անց:

Դատարանի նման վերաբերմունքը չի կարող համարվել խոշտանգման բացարձակ արգելքի ներքո պետության ստանձնած արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությանը խթանող ընթացակարգ: Անհիմն 40, ապա 30 օրով հետաձգումը ինքնին նվազեցնում է՝ դատարանի կոմից բողոքը բավարարվելու դեպքում, ապագա քննության հնարավորությունները, նախևառաջ՝ հոգեբանական բռնության հետքերի դատավարական արտացոլման առումով: Բացի դրանից՝ նման ձգձգումը ցույց է տալիս պետության արհամարհական վերաբերմունքը նման լուրջ մեղադրանքների գոհ հանդիսացող անձանց նկատմամբ, վերջիններիս մոտ ստեղծում/ամրացնում անօգնականության զգացումը:

ՉՈՐՈՐԴ նիստի ընթացքում, որին մասնակցել է պատասխանող կողմը, ի դեմ ՀՔԾ քննիչ Ն.Բաղդասարյանի, մշտադիտարկմամբ արձանագրվել է հետևյալ պատկերը՝

Դատավորը	
5.1 Արդյոք դատավորը բողոքը ներկայացնող կողմին տալիս է ինչ-որ հարցեր պարզաբանելու համար	<input type="checkbox"/> Այո <input checked="" type="checkbox"/> Ոչ
5.2 Արդյոք դատարանը փորձում է բանավոր քննության ընթացքում պարզել նոր փաստեր	<input type="checkbox"/> Այո <input checked="" type="checkbox"/> Ոչ
5.3 Արդյոք բողոքարկող կողմին դատարանը տալիս է հարցեր	<input type="checkbox"/> Այո <input checked="" type="checkbox"/> Ոչ
5.4 Արդյոք բողոքարկող կողմի փաստարկները կամ հակափաստարկները դատարանի կողմից որևէ գնահատման արժանանում են	<input type="checkbox"/> Այո <input checked="" type="checkbox"/> Ոչ
5. 5 Դատարանը խորհրդակցական սենյակ գնալուց հետո որքան ժամանակ անց է կայացրել որոշում	20 րոպե անց, բողոքը մերժվեց

Այսպիսով՝ խոշտանգման փաստի առթիվ հարուցված քրեական գործը կարճելու դեմ բերված բողոքի դատական քննության միակ չհետաձգված նիստում դատավորը որևէ հարց չի տվել տուժող կողմին՝ որևէ հարց՝ պարզաբանելու համար, բանավոր քննության ընթացքում նոր փաստեր պարզելու որևէ փորձ չի ձեռնարկել, որևէ կերպ չի անդրադարձել բողոքը ներկայացրած կողմի փաստարկներին կամ հակափաստարկներին: Այնուամենայնիվ, նիստը հայտարարելով փակված՝ դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ և ընդամենը 20 րոպե անց վերադարձել՝ բողոքը մերժելու մասին իր որոշումը հրապարակելու համար:

Նշված փաստերը վկայում են այն մասին, որ բողոքի և դրանում արձարժված փաստերի հիմնավորվածության մասին որևէ բանավոր ստուգում դատական քննությամբ չի կատարվել, ինչից բխում

է, որ դատարանը իր որոշումը կայացրել է գրավոր դատավարական ընթացակարգով՝ բացառապես հաշվի առնելով բողոքարկված դատավարական ակտի բովանդակությունը: Այսինքն՝ բանավոր դատական քննությունը ինքնին որևէ դեր չի խաղացել բողոքարկված քննչական ակտի օրինականության և հիմնավորվածության առթիվ դատավորի ներքին համոզմունքը ձևավորելու ուղղությամբ, ինչը ակնհայտորեն չի կարելի համարել մինչդատական վարույթի նկատմամբ դատական իշխանության, այն է՝ դատական վերահսկողության արդյունավետ իրացում:

Այդ է վկայում նաև դատարանի բուն որոշումը: Դատարանը ծավալուն մեջբերում է կատարել քննիչի բողոքարկվող որոշումից՝

«/.../ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության արդյունքում չի հիմնավորվել ոստիկանության և քննչական վարչության աշխատակիցների կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու հանգամանքը, կատարվել են բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները: /.../ Փաստորեն Ա.Բ.-ի հայտնած տեղեկությունները՝ պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ, իրենցից ներկայացնում են կասկածներ, որոնք կատարված նախաքննությամբ չեն փարատվել և հետևաբար՝ պետք է մեկնաբանվեն հոգուտ ոստիկանության աշխատակիցների⁵ որպիսի պայմաններում վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով նախատեսված կամ պետական ծառայության դեմ ուղղված այլ հանցակազմերի բացակայության հիմքով:

Ինչ վերաբերվում է Հ.Բ.-ին ոստիկանության բաժնում ապօրինի պահելու հանգամանքին, ապա այդ կապակցությամբ ևս բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, ավելին՝ պարզվել է, որ վերջինս ոստիկանությունում մնացել է իր կամքով և այնտեղից դուրս գալու ցանկություն չի հայտնել, իսկ մինչև՝ ոստիկանություն գնալը ոստիկանության աշխատակիցներին սուտ տեղեկություններ տրամադրելով փորձել է նրանց գցել «մոլորության մեջ և իր կողմից տրամադրված սուտ տեղեկությունը հաստատելու նպատակով գնացել է ոստիկանության բաժին և սպասել քաղաքացու ժամանելուն: Հետագայում հայտնելով ճշմարտությունը՝ դուրս է եկել ոստիկանությունից»:

Դատարանը, լայնածավալ մեջբերումներ անելով ՄԻԵԴ և ՎԴ վերաբերելի և ոչ վերաբերելի նախադեպային դիրքորոշումներից, այդ թվում՝ ենթադրյալ խոշտանգողների անմեղության կանխավարկածի վերաբերյալ, որևէ կերպ իր որոշումը չի հիմնավորել իր կողմից անցկացված նիստերում ներկայացված փաստական հանգամանքներով՝ այն պարզ պատճառով, որ այդպիսիք դատարանում չեն վերլուծվել: Նշված մեջբերումներից հետո, դատարանը, այսպիսով, առանց պատճառաբանության նշել է հետևյալը՝

«Դատարանն արձանագրում է, որ նախաքննության ընթացքում իրականացվել 1 արդյունավետ քննություն, վարույթն իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված ընթացակարգով կատարվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, և դրանց հիման վրա կատարված եզրահանգումները բխում են քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներից»:

ԴՍՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ (ԴՐԱ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՏ ՆԱՆ ԴՍՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՄ ՉՀԱՍՏԱՏՎԱԾ ՓԱՍՏԵՐԻՆ

⁵ Դատարանի որոշման տեքստում բոլոր ընդգծումները մերն են. - Դ.Խ.:

Մինչ դատական ակտի բովանդակային վերլուծությանն անցնելը, ներկայացնենք դրա առավել վերաբերելի հատվածները.

Դատարանի իրավական վերլուծությունները

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«(...) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, ի թիվս այլ լիազորությունների, իրավասու է՝

«(...) որոշումներ կայացնել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ արձանագրել է.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և

գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...) մասնավորապես, վիճարկվող 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ- հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն՝ քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում (...):

«ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դատական վերահսկողության առարկա կարող են լինել հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների բոլոր այն որոշումները և գործողությունները, որոնք խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը: Անձի իրավունքները և օրինական շահերը խախտելու դեպքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները դատական բողոքարկման առարկա լինելու հանգամանքն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքից, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ. անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք» (տես Վալերի Գրիգորյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008թ. հուլիսի 25-ի ԵԿԴ/0031/11/08 որոշումը):

«(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է. որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական

գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (տես Ներսես Միսակյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի ԱԲԴ1/0003/11/08 ապրիլի 10- ի որոշման 12-րդ կետը):

«(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը հանդիսանում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության յուրահատուկ միջոց, որը կատարում է քրեական հետապնդման մարմիններին գապող գործոնի դեր և ուղղված է ինչպես անձի իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելուն, այնպես էլ՝ բացառելու քրեական գործով մինչդատական վարույթում այդ իրավունքների և ազատությունների անհիմն և անօրինական սահմանափակումները և խախտումները:

(...)

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը գործում է որպես մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող միջոց, ուստի չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրան համապատասխան որոշում կայացնելու նպատակ, որը բուն արդարադատության իրականացման գործառույթ է» (տես Արամ Սարգսյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. դեկտեմբերի 22-ի ԵԿԴ/0503/06/10 որոշումը):⁶

Դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումը

Լսելով դիմողի բացատրությունները վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցչի առարկությունները, և ուսումնասիրելով բողոքի վերաբերյալ նյութերը՝ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալու քննությանը, ընդունելու անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնելու քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարության օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն: Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար»:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154.1, 154.2 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները»:

«Բողոքը մերժելու մասին» 11.05.2015թ. որոշման մեջ ՀՀ Գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ.Գևորգյանը պատճառաբանել է.

⁶ Ընդգծումը մերն է՝ Դ.Խ.

«/.../ Մույն քրեական գործի նախաքննությամբ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել ՀՀ Ոստիկանության Տարոնի բաժնի և ՀՀ Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության աշխատակիցների կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարք կատարելու վերաբերյալ, հետևաբար՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015թ. ապրիլի 17-ի որոշման դեմ բերած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Արայիկ Էդուարդի Գգոյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԳ/0049/01/09 գործով 2010թ. փետրվարի 12-ի նախադեպային որոշմամբ անդրադարձել է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հարցերին.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից՝ բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետեւանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթների»:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող զերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում:

Նշված հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ կայացված նախադեպային որոշումներում: Մասնավորապես՝ Զելիլոֆը՝ ընդդեմ Հունաստանի որոշման մեջ դատարանն արձանագրել է. «(...) 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են սահմանափակության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և 1-ին, և 4-րդ Արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների՝ 3-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված թույլտվությունից, բացի որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսում, անգամ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում (...)» (տես Zelilcf V. Greece, 2004թ. մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03 կետ 42):

Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու՝ պետության պարտականությունը:

Պոզիտիվ գործողություններ կատարելու պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված պահանջից, որի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի առաջին բաժնում»:

Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, որ վերոշարադրյալ հոդվածում կիրառվող «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Վերոնշյալ պոզիտիվ պարտականության ամկայությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հիմնավորվել է մի շարք այլ որոշումներում ևս: Այսպես. Բեկոսը և Կուտրոպուլոսը ընդդեմ Հունաստանի որոշման մեջ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ռստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության ամկայություն: (...) Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի (ի թիվս այլ աղբյուրների տես Labita V. Italy, գանգատ թիվ 26772/95, կետ 131)» (Bekos and Koutropou/os v. Greece 2005թ. դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53):

Դատարանն արձանագրում է, որ օրենքով սահմանված ընթացակարգով, հատուկ և անկախ մարմնի կողմից՝ ի դեմս ՀՀ Հատուկ քննչական ծառայության, Արթուր Մաքունցի ներկայացրած հանցագործության մասին հաղորդման հիման վրա Ա.Բ.-ի նկատմամբ անմարդկային վերաբերմունք ցուցաբերելու հանգամանքները պարզելու ուղղությամբ իրականացվել է պաշտոնական և արդյունավետ

քննություն, կատարվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2014թ. հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01 /13 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել, որ.

«ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«(.) 3. հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (...)»:⁷

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

- 1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն),
- 2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին,
- 3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները,
- 4) անձի մեղավորությունը՝ քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ,
- 5) ՀՀ Քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները,
- 6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

⁷ Չդադարենք հիշել, որ առաջին ատյանի դատարանի կողմից քննվում էր ոչ թե խոշտանգման մեջ մեղադրվող անձի գործը ըստ էության, այլ ընդամենը իրականացվում էր քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման օրինականության ստուգումը, իսկ մեղադրանք ընդհանրապես առաջադրված չի եղել:

Վճռաբեկ դատարանը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրել է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

- 1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,
- 2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,
- 3) «անմեղության կանխավարկած» (տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ կետերը, իսկ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքի, դատավարական որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության, անմեղության կանխավարկածի մասին մանրամասն տես նույն որոշման 16-19-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «ապացույցների բավարարությունը»⁸ որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին Վճռաբեկ դատարանը նշել է, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը:⁹ Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: **Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում:** Մինևույն ժամանակ, **անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ:**¹⁰ Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Այսպիսով՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:

Քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների

⁸ Չմոռանանք, որ խոսքը ապացույցների՝ **մեղքը** հիմնավորող բավարարության մասին է:

⁹ Իսկ ի՞նչ ձևով կարող է ապացուցվել հակառակը, երբ գործերը դատարան չեն հասնում:

¹⁰ Ակնհայտորեն, դատարանը հավասարության նշան է դրել իր կողմից՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը բավարարելու և խոշտանգման ենթադրյալ գոհին դատապարտելու միջև:

(ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»:

Ինչ վերաբերում է նախաքննության փուլում դատահոգեբուժական-հոգեբանական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությանը, ապա դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալու քննությանը, ընդունելու անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնելու քննչական և այլ դատավարական գործողություններ /.../»:¹¹

Դատարանն արձանագրում է, որ նախաքննության ընթացքում իրականացվել է արդյունավետ քննություն, վարույթն իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված ընթացակարգով կատարվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, և դրանց հիման վրա կատարված եզրահանգումները բխում են քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներից: Այսպիսով, դատարանը գտնում է, որ ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԴ քննիչ Ն.Բարսեղյանի թիվ 62229814 գործով «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 17.04.2015թ. որոշումն օրինական է և հիմնավոր և Ա.Բ.-ի իրավունքները չեն խախտվել, իսկ դիմողի բողոքում բերված փաստարկները հիմնավորված չեն»:

Փորձագիտական եզրակացությունը՝ դատարանի որոշման պատճառաբանվածության և հիմնավորվածության վերաբերյալ

Ի լրացումն դատական որոշման տեքստին զուգահեռ ծանոթագրություններում վերը արված դիտարկումների, ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խոշտանգման արգելքի երաշխավորման գործում ՀՀ ստանձնած պարտավորություններին այս որոշման համապատասխանության տեսակետից, ընդգծենք հետևյալը՝

1. դատարանը նշել է. «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը գործում է որպես մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող միջոց, ուստի չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրան համապատասխան որոշում կայացնելու նպատակ, որը բուն արդարադատության իրականացման գործառույթ է» (տես Արամ Սարգսյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. դեկտեմբերի 22-ի ԵԿԴ/0503/06/10 որոշումը):»:

Նշված մեջբերումն իրականում համապատասխանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության էությանն ու նպատակին, սակայն դատարանի կողմից այնուհետև բերված բոլոր դիրքորոշումները վկայում են այն մասին, որ դատարանը խառնում է դատական իշխանության

¹¹ Փաստորեն, օրենսգրքի մեջբերված նորմի դատարանի կողմից արված մեկնաբանությունը դատարաններին ազատում է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ներքո՝ խոշտանգման մասին հայտարարությունների՝ ՀՀ ստանձնած արդյունավետ քննության պարտավորությունը երաշխավորելու պարտականությունից:

իրացման երկու տարբեր ձևերի՝ դատական վերահսկողության և արդարադատության իրականացման գործառնությունները՝ հարուցված քրեական գործով վարույթի շրջանակներում կոնկրետ անձին առաջադրված մեղադրանքի ապացուցվածության ստուգման կարգավորումները տարածելով նախաքննության մարմնի որոշումների օրինականության դատական ստուգման գործընթացի վրա: Այս միախառնման պատճառով դատարանը հնարավոր է համարում քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում չիրականացնելու մերժման մասին որոշման դեմ ներկայացված բողոքը մերժել այն հիմնավորմամբ, որ ենթադրյալ խոշտանգողների (ու՛մ մեղադրանք չի էլ ներկայացված) մեղքը չի ապացուցվել հիմնավոր կասկածից վեր չափանիշի հիման վրա և ու՛մ անմեղության կանխավարկածը չի հերքվել: Պարզից էլ պարզ է, որ նշված վերջին հերքումը չի կարող տեղի ունենալ առանց քրեական գործի կամ մեղադրյալի առկայության և մեղքի մասին վարույթի շրջանակներից դուրս:

2. դատարանը մեջբերել է. «ՀՀ Վճռաբեկ դատարանը 2014թ. հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01 /13 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել, որ.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «(...)

3. հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (...):»:

Սա նախկին կետում դատարանի կողմից թույլ տրված դատավարական սխալ մեթոդաբանության կիրառման տրամաբանական շարունակությունն է. հիմնավոր կասկածից վեր շեմը չի կիրառվում մեղադրանք առաջադրելու/չառաջադրելու հիմնավորվածությունը գնահատելու համար:

Զգիտես ինչու՝ սա ՀՀ իրավապահներն ու դատարանները լրիվ ըմբռնում են և կիրառում բոլոր դեպքերում, երբ հանցագործության հաղորդումը/առիթը/հիմքը վերաբերում է ոչ պաշտոնատար անձանց կողմից կատարված հանցագործությանը:

Անգամ ՀՀ ՎԴ նշված նախադեպից, ինչպես և ՀՀ օրենսդրությունից է բխում, որ կասկածների մեկնաբանման պահանջը ենթադրում է գործով մեղադրյալի առկայություն, հետևաբար քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը դատական ստուգման ենթարկելիս՝ անմեղության կանխավարկածի, որպես մեղադրյալի օբյեկտիվ դատավարական կարգավիճակի, նշված պահանջը կիրառելի չէ:

3. Դատարանը, շարունակելով վերը նշված սխալ մեթոդի կիրառումը, նշում է.

«Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում»:

1-ին ատյանի դատարանը և ընդհանրապես դատարանները պետք է ըմբռնեն, որ անմեղության կանխավարկածը՝ մեղքի մասով, դատական վերահսկողության փուլում չի իրացվում, և մինչդասական վարույթում դրա հաղթահարման գործընթաց տեղի չի ունենում, հետևաբար՝ արդյունքում էլ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելով՝ անմեղության կանխավարկածը չի կարող հաղթահարվել, և անձի մեղավորությունը՝ հաստատվել: Հակառակ

պարագայում ստիպված կլինեինք ընդունել, որ դա տեղի է ունենում բոլոր դեպքերում, երբ հարուցվում է քրեական գործ կամ հարուցվում է քրեական հետապնդում, որի առթիվ որոշումը չի վերացվում: Սա արդեն իրոք հակասում է անմեղության կանխավարկածին, քանի որ ընդունվում է, որ այն կարող է հաղթահարվել մինչդատական վարույթում՝ առանց արդարադատություն իրականացնելու, մինչդեռ անձին մեղավոր ճանաչելու իրավունք ունեն միայն դատարանները՝ գործն ըստ էության քննելու արդյունքում: Սա հակասում է քրեական դատավարության մեթոդին ընդհանրապես, քանի որ անմեղության կանխավարկածի հերքումը և անձի մեղավորության հաստատումը հնարավոր են միայն հարուցված քրեական գործով վարույթի և կոնկրետ անձին ներկայացված մեղադրանքի ապացուցման շրջանակներում, որից պաշտպանվելու այդ կոնկրետ անձի իրավունքը կազմող երաշխիքները չեն կարող տրամադրվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների օրինականությունը դատական վերահսկողության ենթարկելու փուլում:

Եվ ընդհանրապես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում մեղքի հաստատում տեղի ունենալ չի կարող, քանի որ մեղքի վարույթում պետք է լինի մեղադրյալ՝ իր պաշտպանության իրավունքով հանդերձ:

4. Միջազգային և ներպետական աղբյուրներում պարունակվող նորմերը, ապա ՄԻԵԴ և ՎԴ նախադեպերը մեջբերելուց հետո 1-ին ատյանի դատարանն, առանց դրանցում առկա պահանջներն ու արտահայտված դիրքորոշումները իր կողմից քննվող գործի փաստերի հետ համադրելու, այսինքն՝ առանց պատճառաբանելու, կատարում է հետևյալ մտահանգումը.

«Դատարանն արձանագրում է, որ օրենքով սահմանված ընթացակարգով հատուկ և անկախ մարմնի կողմից, ի դեմ ՀՀ Հատուկ քննչական ծառայության, Արթուր Մաքունցի ներկայացրած հանցագործության մասին հաղորդման հիման վրա Ա.Բ.-ի նկատմամբ անմարդկային վերաբերմունք ցուցաբերելու հանգամանքները պարզելու ուղղությամբ իրականացվել է պաշտոնական և արդյունավետ քննություն, կատարվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները»:

Դատարանի նշված եզրակացությունը չի բխում դատարանի սեփական գնահատականից, որ կարող էր արվել գործի փաստական հանգամանքները դատական նիստում քննելու դեպքում: Սակայն, ինչպես տեսանք մշտադիտարկման երկրորդ գործիքից, խոշտանգման փաստի առթիվ հարուցված քրեական գործը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու որոշման դեմ բերված բողոքի դատական քննության միակ տեղի ունեցած և չհետաձգված նիստում դատավորը որևէ հարց չի տվել տուժող կողմին որևէ հարց՝ պարզաբանելու համար, բանավոր քննության ընթացքում նոր փաստեր պարզելու որևէ փորձ չի ձեռնարկել, որևէ կերպ չի անդրադարձել բողոքը ներկայացրած կողմի փաստարկներին կամ հակափաստարկներին: Այնուամենայնիվ նիստը հայտարարելով փակված՝ դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ և ընդամենը 20 րոպե անց վերադարձել՝ բողոքը մերժելու մասին իր քննարկվող որոշումը հրապարակելու համար:

Արդյունքում, հաշվի առնելով նաև հաջորդ կետում մեր կողմից նշվածը, մասնավորապես՝ դատարանի կողմից բողոքը մերժելու մասին իր որոշման հիմքում դրվող փաստարկները, կարող ենք ասել, որ դատարանի կողմից դատական նիստում փաստեր չեն հետազոտվել պարզապես այն պատճառով, որ դրանց բաց դատական նիստում հետազոտվելու հնարավոր արդյունքները որևէ կերպ չէին կարող ազդել դատարանի որոշման և դրա պատճառաբանության վրա: Այսինքն՝ նույնպիսի որոշում դատարանը կարող էր կայացնել ցանկացած այլ որոշման դեմ բերված բողոքի կապակցությամբ և անկախ այդ բողոքի քննության դատական նիստում պարզվող հանգամանքներից:

5. Դատարանը նշում է. «Ինչ վերաբերում է նախաքննության փուլում դատահոգեբուժական-հոգեբանական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությանը, ապա դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ /.../»:

Փաստացի, դատարանը, չնայած իր իսկ կողմից մեջբերված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո պահանջվող արդյունավետ քննության իրավունքից բխող պոզիտիվ պարտավորության, ըստ էության հրաժարվում է դրա նախաքննության մարմնի կողմից կատարված քննության արդյունավետության դատական ստուգումից՝ որպես հիմք բերելով 55-րդ հոդվածի վերը նշված նորմը: Մինչդեռ նույն Եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ արդյունավետ քննությունը ենթադրում է նաև համապատասխան փորձաքննությունների անցկացում, եթե դրանցով հնարավոր է ստանալ մեղավորների բացահայտելու ողջամիտ հեռանկար: **Ահա հենց այդ հեռանկարը ստանալուն ուղղված ջանքերի բավարար լինելը և պետք է գնահատեր դատարանը դատական վերահսկողություն իրականացնելիս:**

Փորձաքննություն չնշանակելու մասին որոշումը Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման բացարձակ արգելքի ենթադրյալ խախտման արդյունավետ քննության և դատական ստուգման պարտավորության տեսակետից ենթակա է դատական բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատավարության մասնակիցներին տրված հետաքննության և նախաքննության մարմինների գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքի ուժով: Քանի որ հակառակը նշված չէ, իսկ Կոնվենցիան նախատեսում է արդյունավետ քննության պոզիտիվ պարտավորությունը, որի մեջ մտնում է նաև նշված հեռանկարը տվող փորձաքննության անցկացման իրավունքը, և այդ տեսակետից՝ քննության արդյունավետության դատական ստուգումը, ապա ստացվում է, որ փորձաքննություն չնշանակելու մասին որոշումը բողոքարկելու օրենսդրական արգելքի բացակայության պայմաններում մենք ունենք պոզիտիվ միջազգային պարտավորություն, որից ուղղակիորեն բխում է նշված բողոքարկումը: **Հետևաբար՝ համապատասխան որոշումները՝ փորձաքննություն չնշանակելու կամ առանցքային վկաներին չհարցաքննելու մասին, ենթակա են բողոքարկման և նվազագույնը՝ 3-րդ հոդվածի ներքո պնդվող փաստերի քննության արդյունավետության դատական ստուգման շրջանակներում ենթակա են դատական վերահսկողության:**

Պետք է ասել նաև, որ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասին տրված նշված մեկնաբանությունը չի բխում նույն օրենսգրքի պահանջներից, քանի որ փորձաքննություն չնշանակելու մասին որոշումը ենթակա է դատական բողոքարկման: Եվ ընդհանրապես քննիչի ինքնուրույնության սկզբունքի նման լայն մեկնաբանումը դատարանին կարող է գրկել դատական վերահսկողություն իրականացնելու իրավագրության լեգիտիմությունից, ինչն անթույլատրելի է մանավանդ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման բացարձակ արգելքի (ինչի մասին, ի դեպ, դատարանը նշում է ամենասկզբից) ենթադրյալ խախտման արդյունավետ քննության և դատական ստուգման պարտավորության տեսակետից: Խոշտանգման մասին հայտարարությունների արդյունավետ քննությունը, այսպիսով ներառում է և լիազորված իրավապահ մարմինների քննությունը և դրա ստուգման դատական երաշխիքները:

6. Վերջապես նշված սկզբունքները, նորմերը և դիրքորոշումները մեջբերելուց հետո դատարանը նշում է.

«Դատարանն արձանագրում է, որ նախաքննության ընթացքում իրականացվել է արդյունավետ քննություն, վարույթն իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված ընթացակարգով կատարվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, և դրանց հիման վրա կատարված եզրահանգումները բխում են քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներից: Այսպիսով, դատարանը գտնում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԴ քննիչ Ն.Բարսեղյանի թիվ 62229814 գործով «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 17.04.2015թ. որոշումն օրինական է և հիմնավոր, և Ա.Բ.-ի իրավունքները չեն խախտվել, իսկ դիմողի բողոքում բերված փաստարկները հիմնավորված չեն»:

Փաստորեն, արդյունքում՝

1. դատարանը քրեական գործի և քրեական հետապնդման հարուցումը/իրականացումը հնարավոր է համարում միայն ենթադրյալ խոտանգողների մեղքը հիմնավոր կասկածից վեր հաստատվելու դեպքում.
2. դատարանը իր որոշման մեջ, որպես իր «ՈՐՈՇԵՑ» մասի հիմնավորում, մեջբերումներ է անում ՄԻԵԴ, ՎԴ, ՄԴ նախադեպերից ու միջազգային ու ներպետական աղբյուրներից՝ առանց դրանք իր կողմից քննվող հարցի/գործի նկատմամբ վերաբերելիությունը հիմնավորելու, որի պատճառն այն է, որ՝
3. դատարանը ընդհանրապես իր որոշումը չի պայմանավորում գործի փաստական հանգամանքներով.
4. դատարանը, որը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ուժով նաև կրում է դրա ներքո պնդվող փաստերի առթիվ կատարված քննության արդյունավետության ստուգումը, իր գործը չի համարում այդ առթիվ, մասնավորապես նշված փաստերի վերհանման նպատակով քննիչի կողմից փորձաքննություն չանցկացնելու վերաբերյալ որոշման օրինականության ստուգումը:

Ա.Բ.-ի գործով դատարանի կողմից կայացված նման որոշում կարելի է կայացնել ցանկացած փաստական հանգամանքներ ունեցող գործով, այսինքն՝ նման պատճառաբանության համար փաստական հանգամանքների կոնկրետ բովանդակությունը նշանակություն չունի:

Ա. Դատական վերահսկողությունը վերաքննիչ դատարանում

Առաջին ատյանի դատարանի 2015թ. սեպտեմբերի 2-ի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Բողոքում, մասնավորապես, նշվել է.

«...գործի շրջանակներում նախաքննության մարմինը ձեռքի տակ ունենալով Ա.Բ.-ի, Հ.Բ.-ի, Բ.Խ.-ի և ոստիկանության աշխատակիցներ Վազգեն Թորոսյանի, Անի Գաբրիելյանի, Կարեն Մուրադյանի, Արման Գալստյանի, Հովսեփ Հովսեփյանի, Էրիկ Շարմազանովի և Արմեն Դերձյանի կողմից տրված իրարամերժ ցուցմունքները, առանց պատշաճ պատճառաբանությունների արժանահավատ է համարել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները, իսկ Ա.Բ.-ի, Հ.Բ.-ի, Բ.Խ.-ի ցուցմունքներն այն մասին, որ Ա.Բ.-ն և Հ.Բ.-ն ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են անմարդկային վերաբերմունքի և անօրինական պահվել անազատության մեջ, արժանահավատ չի համարվել:

Մեջբերում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ռամսահայի գործով վճռից, փաստել են, որ սույն պարագայում նախաքննության շրջանակներում չեն ձեռնարկվել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին բացառել ոստիկանության աշխատակիցների՝ մինչև ցուցմունքներ տալը նախապես պայմանավորվելը:

... Նախաքննության մարմնի կողմից որևէ քննություն չի իրականացվել՝ Ա.Բ.-ի և առերես հարցաքննվող Վ.Թորոպյանի, Ա.Գաբրիելյանի, Է.Շարմազանովի, Ա. Գալստյանի և Լ.Հովսեփյանի ցուցմունքների միջև ակնհայտ հակասությունները պարզելու ուղղությամբ, որոնք վերաբերում էին Ա.Բ.-ի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված ապօրինությունների տեղին (աշխատասենյակի), հետաքննչական գործողությունների կատարման ծավալին, տեսակին, հետաքննչական բաժնից քննչական բաժնի տեղափոխելու հանգամանքներին: Նախաքննության մարմինը որոշումն ընդունել է առերես հարցաքննություններից մի քանի օր հետո այն դեպքում, երբ տվյալ առերես հարցաքննությունների ժամանակ բացահայտված հակասություններից անմիջապես հետո՝ կարճ ժամանակ անց անհրաժեշտ էր այդ հակասությունների վերաբերյալ իրականացնել անհրաժեշտ քննչական գործողություններ:

Այսպիսով՝ նախաքննության մարմինը չիրականացնելով անհրաժեշտ քննություն՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներում առկա հակասությունների պարզաբանման ուղղությամբ, որի համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակ և քննչական գործողություններ՝ դրանք ի հայտ գալուց հետո օրեր անց, որոշում է կայացնում քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը կարճելու մասին, նման շտապողականությունը հիմք է տալիս պնդելու, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից չի ապահովվել բազմակողմանի, լրիվ և օբեկտիվ քննության սկզբունքների իրականացումը, այլ այն նպատակ է հետապնդել կոծկելու ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունը, շուտափույթ դադարեցնելու գործի քննությունը ապօրինի որոշման կայացման միջոցով: Հետևաբար, նախաքննությունն իրականացնող մարմնի գործողությունները ուղղված չեն եղել վատ վերաբերմունքի դեպքի հանգամանքների լրիվ և օբեկտիվ պարզմանը:

...

Ոստիկանությունում գտնվելու ժամանակահատվածում Ա.Բ.-ն փորձել է զանգահարել իր տնօրենին, որպեսզի հայտնի աշխատանքի չներկայանալու պատճառների մասին, սակայն չի կարողացել խոսքը ավարտել, քանի որ ոստիկանության աշխատակիցները հեռախոսը ձեռքից խլել են և թույլ չեն տվել այլ զանգեր կատարել: Երկու ժամ տվյալ աշխատասենյակում պահելուց հետո տեղափոխել են հարակից աշխատասենյակ: Այնուհետև ժամը 16:00-16:30-ի սահմաններում դիմացի սենյակում նստած ոստիկանության աշխատակիցը ինչ-որ հեռախոսագնդ է ստացել, որից հետո վերադարձրել են բջջային հեռախոսը, և ասել են, որ գնա դստերը վերցնի և գա ոստիկանություն: Նշված ժամանակահատվածում ոստիկանության աշխատակիցների կողմից որևէ փաստաթուղթ չի լրացվել:

Սույն պարագայում ոստիկանության աշխատակիցները Ա.Բ.-ին անօրինական կարգով ազատությունից հարկադրաբար զրկել են շուրջ 4 ժամ 40 րոպե:

...

Սույն գործի շրջանակներում Ա.Բ.-ի և Հ.Բ.-ի կողմից տրված ցուցմունքներում վերջիններս պնդել են, որ ոստիկանների հասցրած հարվածները հոգեբանական ճնշումներ գործադրելու նպատակ են հետապնդել, և դրանցից նրանք մարմնական վնասվածքներ չեն ստացել, բոլոր գործողությունները հետապնդել են նրանց նվաստացնելու նպատակ, որին նրանք չդիմանալով՝ տվել են իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:

Սույն գործի շրջանակներում Ա.Բ.-ի նկատմամբ վատ վերաբերմունքի արդյունքում վերջինս կատարել է ինքնասպանության փորձ (որը իր կամքին հակառակ կանխվել էր), որը անմիջապես պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում նրա նկատմամբ ոստիկանության աշխատակիցների

կողմից դրսևորված վատ վերաբերմունքի հետ: Ոստիկանության աշխատակիցների նման վարքագծի դրսևորումը Ա.Բ.-ի մոտ առաջացրել է վախի, տագնապի և թերարժեքության զգացում, և տուժածին վիրավորելու ու նսեմացնելու արդյունքում կոտրվել է նրա ֆիզիկական ու հոգեկան կամքը, որը նրան ստիպել է գործել իր կամքին և խղճին հակառակ:

Եվրոպական դատարանը վերաբերմունքը որակում է որպես «անմարդկային», քանի որ այն կանխամտածված էր, տևել էր մի քանի ժամ և պատճառել էր իրական մարմնական վնասվածքներ և ծանր ֆիզիկական ու հոգեկան տառապանքներ:

...

Նախաքննության շրջանակներում չեն առգրավվել և վերծանվել ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժանմունքում տեղադրված տեսախցիկների միջոցով ֆիքսված ձայնագրությունները, որոնք կարող էին հիմնավորել Ա.Բ.-ի, Հ.Բ.-ի և Բ.Խ.-ի կողմից վկայակոչած մի շարք հանգամանքներ:

Նախաքննության շրջանակներում չեն նշանակվել համապատասխան հոգեբանական-հոգեբուժական փորձաքննություններ, որոնք ունակ կլինեին պարզելու, թե Ա. և Հ.Բ.-ների մոտ առկա է արդյոք վախի, տագնապի և թերարժեքության զգացում, կոտրված է արդյոք նրանց ֆիզիկական ու հոգեկան կամքը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի քննության ընթացքում չի նշանակվել դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննություն Ա.Բ.-ի կողմից ինքնասպանության փորձ կատարելուն հանգեցրած հանգամանքները և շարժառիթները պարզելու նպատակով:

...

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Վերաքննիչ դատարանը, թվարկելով գործով ձեռք բերած ապացույցները, դրանցից բխող փաստական հանգամանքները, այնուհետև նշել է, որ

«Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննությամբ քննությամբ հավաքված ապացույցների հիման վրա հարկ է փաստել հետևյալը.

... Անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:...

...Անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:»...:

Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «...քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն

այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:...

Փաստորեն ոստիկանության և քննչական վարչության աշխատակիցների կողմից Ա.Բ.-ի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրելու, նրա արժանապատվությունը նսեմացնելու, նրան համոզելու և ցուցմունքներ կորզելու հանգամանքները հիմնավորող միակ ապացույցը գործի ելքով շահագրգռված Ա.Բ.-ի ցուցմունքն է, իսկ վերջինիս ծնողներ Բ.Խ.-ի և Հ.Բ.-ի ցուցմունքները անուղղակի ապացույցներ են՝ հիմնված Ա.Բ.-ի պատմածի վրա:

Այսպիսով, վերլուծելով և գնահատելով սույն քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները, միաժամանակ դրանք համադրելով ՀՀ Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, պետք է արձանագրել, որ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության արդյունքում չի հիմնավորվել ոստիկանության վարչության աշխատակիցների կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու հանգամանքը, կատարվել են հնարավոր բոլոր դատավարական գործողությունները և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: Փաստորեն, Ա.Բ.-ի հայտնած տեղեկությունները՝ պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ, իրենցից ներկայացնում են կասկածներ, որոնք կատարված նախաքննությամբ չեն փարատվել և հետևաբար՝ պետք է մեկնաբանվեն հոգուտ ոստիկանության աշխատակիցների, որպիսի պայմաններում վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել՝ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով նախատեսված կամ պետական ծառայության դեմ ուղղված այլ հանցակազմերի բացակայության հիմքով:

Ինչ վերաբերում է Հ.Բ.-ին ոստիկանության բաժնում ապօրինի պահելու հանգամանքին, ապա այդ կապակցությամբ ևս բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, ավելին՝ պարզվել է, որ վերջինս ոստիկանությունում մնացել է իր կամքով և այնտեղից դուրս գալու ցանկություն չի հայտնել, իսկ մինչև ոստիկանություն գնալը՝ ոստիկանության աշխատակիցներին սուտ տեղեկություններ տրամադրելով՝ փորձել է նրանց զցել մոլորության մեջ և իր կողմից տրամադրված սուտ տեղեկությունը հաստատելու նպատակով գնացել է ոստիկանության բաժին և սպասել քաղաքացու ժամանելուն: Հետագայում հայտնելով ճշմարտությունը՝ դուրս է եկել ոստիկանությունից:

... Սույն գործով Ա.Բ.-ի հաղորդման մեջ և ցուցմունքներում նկարագրված հանգամանքները չեն հիմնավորվել ապացույցների գնահատման արդյունքում, վերջինիս հայտնած տեղեկությունները գնահատվել են որպես կասկածներ, որոնք չեն փարատվել սույն քրեական գործի նախաքննության շրջանակներում և մեկնաբանվել են հոգուտ պաշտոնատար անձանց:

Այս պայմաններում հնարավոր չէ արձանագրել, որ Ա.Բ.-ն գիտակցաբար հանցագործության մասին սուտ հաղորդում է տվել իրավապահ մարմիններին, այսինքն՝ վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունը չի հիմնավորվել:»:

...

Վերաքննիչ դատարանն այնուհետև արտատպել է առաջին աստիճանի բերված փաստարկները՝ հիմնավոր կասկածից վեր շեմի, խոշտանգման արգելքի բացարձակ բնույթի և խոշտանգման մասին հայտարարությունը արդյունավետորեն քննելու՝ պետության պոզիտիվ պարտավորության առթիվ առկա ՄԻԵԴ, ՎԴ նախադեպերի դիրքորոշումները, միջազգային և ներպետական աղբյուրների նորմերը, որոնք քննարկվեցին վերևում, և որոնց վերաբերելիությունը տվյալ գործին արատավորված է այն մեկնաբանմամբ, որ դատական վերահսկողության այս փուլում բողոքը բավարարելով, այսինքն՝ քրեական գործ հարուցելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելով, կխախտվեր ենթադրյալ խոշտանգողների անմեղության կանխավարկածը, քանի որ կհաստատվեր նրանց մեղքը: Մրա մեկնաբանությունը արդեն իսկ տվել ենք վերևում՝ դատական վերահսկողության շրջանակներում մեղքի հարցերի քննարկում, առավել ևս վերջնական լուծում չտալու հետ կապված:

Դ. ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես նշվեց, մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է 10 դեպք, որոնց առթիվ արված խոշտանգման և/կամ այլ վատ վերաբերմունքի մասին հայտարարություններով քրեական վարույթը գտնվում է տարբեր փուլերում: Սակայն բոլոր գործերով էլ որևէ դեպք չկա, որտեղ պաշտոնատար անձանցից որևէ մեկին առաջադրված լինի քրեական մեղադրանք: Սրա հիմնական պատճառը մենք համարում ենք այն, որ արհեստականորեն և ի տարբերություն բոլոր այլ հանցագործությունների մասին հաղորդումների, որտեղ որպես կատարող նշվում են ոչ պաշտոնատար անձինք, մեղադրանք ներկայացնելու համար պահանջվող շեմը բարձրացվել է հիմնավոր կասկածից վեր շեմին, և քրեական հետապնդման իրականացումը այս դեպքերում ՀՀ դատարանների կողմից համարվում է այդ պաշտոնատար անձանց մեղքի հաստատում և նրանց անմեղության կանխավարկածի խախտում:

Փաստորեն, կարելի է վստահորեն ասել, որ Հատուկ քննչական ծառայությունը, որպես խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արդյունավետ և անկախ քննության մեխանիզմ, չի գործում, և այս ինստիտուտի ստեղծումը այս գործերով ընդամենը հանգեցրեց այն վիճակին, որ ի տարբերություն նախկին փորձի, երբ հիմնականում մերժվում էր քրեական գործի հարուցումը, այժմ քրեական գործեր հարուցվում են, սակայն՝ քննությունը, ելնելով դատարանների կողմից ձևակերպված վերը նշված խտրականորեն ավելի բարձր ապացուցման շեմից, կատարվում է զուտ դրանք կարճելու դատավարական հեռանկարով:

Այս իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ դատարանները քրեական գործ հարուցելու և մեղադրանք առաջադրելու դատավարական որոշումների կայացման համար պահանջվող ապացուցողական շեմը որևէ կերպ չտարբերակեն ՀՀ քրեական օրենսգրքի մյուս բոլոր հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի հարուցման և դրանցով մեղադրյալ ներգրավելու ապացուցողական շեմից:

Կարծում ենք նաև՝ խիստ անհրաժեշտություն կա, որ այս գործերից որևէ մեկով ՀՀ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունի վարույթ և ՀՀ միջազգային պարտավորություններից բխող նախադեպային դիրքորոշում արտահայտի՝ խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի դրսևորումների առթիվ հայտարարություններով քրեական գործերի հարուցման, դրանցով քրեական հետապնդում իրականացնելու և մեղադրական դատավճիռ կայացնելու համար անհրաժեշտ ապացուցողական շեմերի տարբերակման վերաբերյալ:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Հասցե՝ ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 59

Հեռ.՝ 0322 4 22 68

Բջջ.՝ 094 04 22 68

Էլ. փոստ՝ hcav@hcav.am

Կայք՝ www.hcav.am